


# ՓՈՔՐԻԿ ԵՍԿԻՄՈՍ ՄԱՆԵՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԵՎԱՆ — 1935

R  
46046  
F  
366 00

46046

ETOS SD 80  
23 JUN 2000



08.02.2013

087-1  
4-51

Թ. ԱՄՈՒՆԴՍԵՆ

# ՓՈՔՐԻԿ ԵՍԿԻՄՈՍ ՄԸՆՆԻՆ

Մ Ի Դ Ր Վ Ա Գ  
Թ. ԱՄՈՒՆԴՍԵՆԻ  
ՃԱՆԱՊԱՐՀՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ

Վերամշակումը և սերերեննեկովաձեւ

Ուսուերենից բարգման ձեր ԹԱՎԱՆՈՍՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿ ՀՐԱՄԱՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1935



Բ. 8309

Պատ. իմրագիր Ա. Հայրյան  
Տեխնիկական իմրագիր Հ. Տեր-Դավթյան

15917


Գլան վ 1 ի տ 52  
Հրատար. № 3211  
Տիքան 5 000

(359.)



20827-59

Հանձ. ե արտ. 20/II Ստորագրված ե տպելու 25/III-35  
Ստատֆորմատ Բ6 125x176 պատվիր № 1184  
Տիպոգրիա իմ. Ստաчки 19.2 թ. ԱԿԿՊ Ռոստով նա-Դոնու.



## I. ՄԵՆՔ ՅԵԶԵՐՈՒՄ ԵՆք

— Հանզեն, մի այս կողմը նայի: Հանզենը հեռաղիտակը դրեց աշքերին:  
— Տեսեք, կարծես այս ափում կարելի կլինի հարմար նավահանգիստ գտնել:

Ավին այստեղ, «Վիլհելմ արքայի հողում» այնպես եր, ինչպես ամեն տեղ Գրենլանդիայի հյուսիս-արևելյան մասում՝ ամայի եր, կային բազմաթիվ ծովածոցներ և մերձափնյա կղզիներ: Թվում եր, վոր քամուց պաշտպանված վոչ մի տեղ չկա, վոր նավի համար կայան լինի: Բայց յես ցույց տվեցի Հանզենին մի ծովածոց, վոր ավելի խորն եր մտել ափի մեջ և շրջապատված եր բարձրաբերձ ժայռերով:

— Այ, այստեղ, կարծես վատ չեր լինի ձմերելու համար:

— Այստեղ՝ Ուզիդ եք ասում, իսկապես վարհարմար տեղ ե:

Հանգենը հեռացրեց հեռագիտակն աչքերից:

Մի քանի ըոպե չանցած նավի վրա բոլորն արդեն գիտեյին, վոր նավահանգիստը մոտ ե: Ուռա, վերջապես մեր թափառումները վերջ կունենան: Յեվ այս ել ինչպես ժամանակին, սեպտեմբերի վերջն եր, ձմեռը վրա յեր համսում, բուք ու բորանների ժամանակը յեկել եր... Իսկ մենք դեռ չեյինք գտել մի հանգիստ ու հարմար տեղ, վորտեղ կարողանայինք կատարել մեր աշխատանքները՝ դիտել և ուսումնասիրել այս ցուրտ ու մռայլ յերկիրը: Իսկ այժմ, թվում եր, վոր այդպիսի տեղ գտել ենք:

Հանգենն ուրախությունից ձեռքերը շփելով քայլում եր տախտակամածի վրա: Նա ողերենութաբան եր և անհամբերությունից չեր իմանում ինչ անի, վոր վորքան կարելի յե շուտով կարգի բերի իր գործերը և սկսի իր դիտողությունները: Պետք ե ասել, վոր մեր բոլորին ցանկություննել նույն եր: Իսկ նավաստիները յերազում եյին վորսորդության մասին...

Դեռ լույս եր, վոր նավը մտավ ծովածոցը և կանգ առավ ափի մոտ: Ճշմարիտ վոր հիանալի տեղ եր: Այստեղ քամին ինչքան ուզում ե թող փշի, մեզ վոչինչ չի անի:

Յեվ ահա մենք ձմերելու տեղումն ենք: Տե-

ղավորվեցինք, ամեն բան կարգի բերինք, վորությունը դիտողություններ կատարելու տեղերն ու կայանները և հետեւյալ որվանից գործի անցանք: Իսկ գործից ազատ ժամանակ գնում եյինք վորսի, այստեղ հաճախ եյին պատահում հյուսիսային հիանալի յեղջերուներ:





## II. ԾԱՆՈԹԱՆՈՒՄ ԵՆՔ ԵՍԿԻՄՈՍՆԵՐԻ ՀԵՏ՝


— Հյուսիսային կողմում յեղջերուներ են յերեռում, շուտ արեք, պատրաստվեցեք...

Այդ ասողը կինդշտրոմն եր, մեր խոհարարը: Նա վագեվազ մտավ կայուտը\*, վորտեղ մենք նոր եյինք վերջացրել նախաճաշը, վերցրեց հրացանը և սկսեց այնպիսի շարժումներ անել, կարծես մենք յեղջերուներ լինեյինք և նա մեզ վրա եր ուզում կրակել իր հրացանը...

Բոլորս տեղներից վեր թռանք ու վագեցինք դեպի մեր հրացանները: Շատ չանցած բոլորս արդեն ափումն եյինք:

Յես բարձրացա մի բլրակի վրա, վորտեղից

\* Փոքրիկ սենյակ նավի մեջ:



սիրում եյի դիտողություններ անել: Ամայի և անդորր եր չորս կողման: Ցերեռում եր միայն ծովը՝ ամբողջապես ծածկված սառուցով, և անսահման ծյունապատ մի տարածություն: Բայց ուր են յեղջերուները: Աչքերս հառած նայում եյի զեպի հեռու հորիզոնը և հանկարծ նկատեցի հյուսիսային կողմում սեին տվող մի բան:

Այդ սե բանը արագությամբ մեծանում եր, պարզ եր, վոր մոտենում եր դեպի մեզ: Յերեկի խևապես յեղջերուներ եյին: Հեռաղիտակը դրեցի աչքերիս ավելի լավ տեսնելու, թե դա ինչ բան է:

Յեվ ինչ տեսնեմ... Շփոթվելուց հեռադիտակս խկույն ցած թողեցի: Պարզվեց, վոր տեսածո յեղջերուներ չեն, այլ մարդիկ են:

Եսկիմոսներ եյին և հիւգ հոգի: Յերեկ նկատել եյին մեր նավը և այժմ արագությամբ գալու եյին մեր կողմը:

Պատճառ կար մտահոգվելու: Եսկիմոսները անկասկած մեզ թշնամի են համարում: Կարելի յե նրանք մտադիր են հարձակում գործելու մեզ վրա: Իսկ մեր մեջ վոչ վոք չկար, վոր նրանց լեզուն իմանար:

Յես վազեվազ ցած իջա բլրակից ու շտապեցի գեպի նավը մերոնց զգուշացնելու համար:

— Հանգեն, լինդշտրոմ, ընկերներ, մեր տեսածը յեղջերուներ չեն, այդ մարդիկ են... Եսկիմոսներ են:

Մենք ամենսկին չեյինք սպասում, վոր այստեղ, տարվա այս ժամանակին կհանդիպենք եսկիմոսների: Զգիտեյինք, ինչ անենք այժմ: Բայց մտածելու ժամանակ չկար, եսկիմոսները մոտենում եյին: Նրանք ահա բլրակի վրա յեն, մեզնից ամենաշատը հինգ հարյուր մետր հեռավորության վրա: Հրացաններս մաքրեցինք, լցրեցինք ու սպասում եյինք: Յեթե բանը կուլի համար, ինչ արած, պիտի կուվենք: Բայց ինչ լավ կլիներ, յեթե գեթ մի քանի խոսք իմանայինք եսկիմոսներն և նրանց

հասկացնեյինք, վոր մենք ամենսկին թշնամիներ չենք: Ախար յեթե բանը կովի համար, մենք ստիպված պիտի հրացան աղձակինք նրանց վրա, իսկ մենք այդ ամենսկին չեյինք ցանկանում:

Իսկ եսկիմոսները մոտենում, հա մոտենում ելին: Մենք նրանց լավ տեսնում եյինք: Նրանք բարձր աղաղակում եյին, զանազան շարժումներ անում և մեզ ցույց տալիս մատներով: Բայց չնայելով դրան, մեզ այնպես եր թվում, վոր նրանք խաղաղ են արամագրված:

Ի՞նչ անենք, հարձակվենք թե պաշտպանվենք: Իհարկե պաշտպանվենք: Այդ եր մեր բոլորիս միաձայն վճիռը:

Իսկ այդ ժամանակ եսկիմոսները կազմ ու պատրաստ հարձակվելու, գալիք եյին ուղիղ մեր հանգեպ: Ուրիշ ճար չկար, մենք ել պետք ենույնն անեյինք: Բայց միթե այժմ կոիվ պիտի սկսի մեր մեջ:

Յես ել զգիտեմ ինչպես, հանկարծ միտս յեկավ «տեյմա» խոսքը:

Տեյմա... սակայն ի՞նչ ենշանակում այդ խոսքը: Կարծեմ եսկիմոսներն վողջույն են նշանակում:

Վորքան ույժ ունեյի գոռացի՝

— Տեյմա:

— Տեյմա, տեյմա, գոռացին և իմ ուղեկիցները:



Եսկիմոսները կանգ առան։  
Նրանց մեջ իրարանցում սկսվեց։  
Մենք վողջունում եյինք նրանց և  
նրանք չեցին իմանում, ինչ մարդիկ ենք մենք, թշմամի՞ թե բարեկամ։

Վճռական րոպէ եր։

Բայց յերենում եր, վոր եսկիմոսներն ել ցանկություն չունեյին կովելու, վորովհետև խսկույն և յեթ մենք լսեցինք՝

— Մա-նի-տկու-մի։

Վորքան կարող եյի լարեցի հիշողությունս մտաբերելու համար, թե ինչ ե նշանակում «մանիտկումի»։ Այդ ծանոթ խոսք եր թվում ինձ...

Մենք դարձյալ լսում ենք՝

— Մա-նի-տկու-մի, մա-նի-տկու-մի...

Գերջապես հիշեցի։ Մանիտկումի՝ ամենասիրալիք վողջույնն ե եսկիմոս ցեղերի։

Ինչքան բախտավոր ենք։ Նշանակում ե պատերազմ չի, այլ խաղաղություն ե...

Մենք իսկույն հրացաններս մի կողմ դրինք և շտապեցինք եսկիմոսներին զիմավորելու։ Մենք պատախանում եյինք նրանց վողջույններին և նույնպես շարունակ աղաղակում՝ «մանիտկումի»։

Դա բարեկամների մի ուրախալի հանգիպում եր։ Մենք գրկախառնվում եյինք, աղաղակում, միմյանց ուսերի խփում։ Դժվար ե ասել մեզնից ովքեր եյին ափելի ուրախ խաղաղության համար՝ մենք թե նրանք։

Դնացինք դեպի նավը։ Նշաններով հրավիրեցինք մեր նոր բարեկամներին բարձրանալ նավի վրա։ Նրանք հաճույքով համաձայնեցին։

Լինդշտրոմը տաք սուրճ և տաքացրած հացբերեց նրանց հյուրախիրելու։ Մեզ համար դրանք շատ համեղ բաներ են, բայց եսկիմոսներին դուր չեկավ։ Նրանք համը տեսան ու դժկամակության նշաններ ցույց տվին, բայց միենույն ժամանակ նրանք նշաններով հասկացրին, վոր ծարավ են, խմել են ուզում։ Մենք նրանց ջուր տվեցինք։

Այդ նրանց ավելի դուր յեկավ, քան սուրճը։ Նրանք յերեխայի պես ուրախացան և նրանցից յուրաքանչյուրը մի շնչով յերկուական լիտը ջուր խմեց։

Յես զարմացած նայում եյի նրանց վրա։ Կարելի բան ե, վոր մարդ սառը ջուրը գերազասի սուրճից։ Վոր այդպես ե, այն ժամանակ իհարկե նրանց պետք ե ուրիշ կերպ հյուրախիրել։

— Լինդշտրոմ, գնա, տախտակամածից բեր այստեղ յեղջերուների վոտները։

Վոտները մեծտեղ գալուն պես սկսվեց իսկական ինձույքը։ Մեր հյուրերը իրենց մորթե կոշիկներից հանեցին մեծ ու յերկար դանակներ և քիչ ժամանակ անցած յերեք յեղջերուների վոտներից մնացին միայն վոսկորները։


Մենք զարմանքից մնացել եյինք ապշած։ Կյանքներումս չեցինք տեսել այդպիսի ախորժակ։

Յերբ միսը կերան պրծան և նրանցից ամեն մեկը յերկուական լիտը ջուր անուշ արեց, դրանից հետո սկսվեց մեր խոսակցությունը։

Մենք շատ շուտով սովորեցինք միմյանց հասկանալ և բաժանվեցինք միմյանցից գոյն սրտով:

Յերկու որ հետո մենք նորից հանդիպեցինք միմյանց: Եսկիմոսները բերել եյին մեզ մոտ վաճառելու յեղջերվի մորթիները: Բայց նրանք անհնորք վաճառականներ են՝ մենք գնեցինք նրանցից յեղջերվի մի մեծ ու գեղեցիկ մորթի մի ասեղով:

Բայց պետք ե ասել, վոր այդ նրանց համար այնքան ել եժան զին չեր: Դրամի արժեքը նրանք չգիտեյին, իսկ ասեղը նրանց համար շատ հարկավոր բան եր: Մինչև մեր գալը ամբողջ ցեղը միայն մի յերկաթե ասեզ ե ունեցել, այն ել իրենց շինածը: Մեզանից յերկրորդ ասեղը ստանալուց հետո նրանք իրենց շատ հարուստ եյին համարում:



### III. ԿՅՈՒՐ ԵՆՔ ԳՆՈՒՄ ԵՍԿԻՄՈՍՆԵՐԻ ՄՈՏ

Իմ բարեկամ Մաննին չկար այն եսկիմոսների մեջ, վորոնց հետ մենք ծանոթացանք: Յես նրան ուշ հանդիպեցի, յերբ ինքս հյուր գնացի եսկիմոսների մոտ: Նրանց գյուղը բավական հեռու յեր մեզանից: Մենք ճանապարհ ընկանք ցերեկով, ժամի մոտ տասներկուսին, և չորս ժամ ճանապարհ գնացինք առանց մի ըոպե կանգ առնելու: Յես գնում եյի լաքաններով, իսկ ինձ ուղեցող եսկիմոսները ձյունի չմուշկներով: Գիշերը վրա հասավ, ցուրտը սաստկացավ, իսկ գյուղը դեռ չեր յերեսում:

Հանկարծ ուրախ բացականչություններ լսեցի: Եսկիմոսները ուժգին շարժումներ կատարելով ինձ ցույց եյին տալիս վարի հովիաը: Յես նայեցի գեղի վար և ըլուրի գագաթից աջքովս ընկան խավարում փայլվող մի քանի դուրեկան կրակ-

Ներ: Պարզ եր, վոր դա եսկիմոսների սառցաշեն տներն ելին:

Յես շատ ուրախացա: Սաստիկ ցուրտ գիշեր  
եր, իսկ այդ կրակները խոստանում եյին տաք  
ոթիան ու հանգիստ...

ՄԵՆՔ անընդհատ առաջ եյինք շարժվում: Կրակներն ահա բոլորովին մոտ են: Մի քիչ ել վոր գնանք, մենք «տանը» կլինենք: Սակայն այս- տեղ ի՞նչպիսի հանդիպում ե սպասում ինձ:

Յես ակամայից սեղմեցի իմ քնի պարկի մեջ  
պահած այն մի քանի փայլուն զարդերը, փոք  
վերցրել ելի հետո եսկիմոսներին ընծայելու հա-  
մար, և հենց այդ ըստեցին ականջիս հասան բարձ-  
րածայն աղաղակներ։

— Կաբլունա, կաբլունա, լսվում եր սառն ողի  
մեջ:

«Կաբլունա» Եսկիմոսերեն Նշանակում են  
սպիտակամորթ մարդ:

Պարզ եր, վոր իմ ուղեկիցները առաջուց իմաց  
ելին տվել իրենց ցեղակիցներին իմ գալու մասին:

Յեկ մի ակնթարթում բոլորը խրճիթներից դուրս թափվեցին։ Եսկիմոսների մի մեծ խումբ շրջապատեց ինձ։ Նրանք ինձ թափահարում եցին, շոշափում, շորերս քաշքում, նայում եցին յերեսիս և ինչքան ույժ ունեցին գոռում։ Ինչ եցին ուզում ասել, վոչինչ չեյի հասկանում, միայն շարունակ խում են՝ «մանխտկումա»։

Ամենքից մոտ կանգնած եր մոտա մի դեռա-  
հաս եսկիմոս, ճամարյա դեռ յերեխա, թուխ յե-  
րեսով և կենդանի ու վառվուն աչքերով։ Դա


ինքը Մաննին եր: Յես ակամայից աշ-  
քերս չեյի կարողանում հեռացնել նրա-  
նից. այնքան նա գեղեցիկ էր: Գրեն-  
լանդիայի հարավային ափերի եսկիմոս-  
ները, վորոնց առաջ մենք հանդիպել  
եյինք, բոլորը տգեղ եյին՝ մեծզլիսնի-  
և լայն ու տափակ քթերով: Իսկ եսկի-  
մոսների այս ցեղի մեջ յերբեմն պա-  
տահում եյին իսկապես գեղեցիկ տղա-  
մարդիկ: Մաննին դրանցից մեկն եր:

Նա կանգնած եր մոտս մի ձեռքով  
պինդ բռնած իմ շորից, իսկ մյուս  
ձեռքը իրեն կպցրած, իսկ նրա տչ-  
քերը նայում եյին ինձ վրա հիացմուն-  
քով ու թախանձագին։ Յես հասկացա-  
նրա միտքը։ Նա շատ եր ցանկանում,  
մոր կարլունան գնա նրա մոտ։

Իսկ զրության 20 աստիճան ցուրտ եր և կաբ-  
լունան մեծ ցանկություն ուներ հանգստանալու  
և մի բան ուտելու։ Յես ժպտացի և բռնեցի  
Մաննիի ձեռքը։ Նա նույնպես ծիծաղեց, ցույց տա-  
լով իր սպիտակ ատամները, գլխով արեց և ինձ  
քաշեց ու տարավ իր յետեից։ Մեր կողքից  
գնում եր մի ուրիշ ավելի տարիքով եակիմուն։  
Դա Ատիկլեռան եր՝ Մաննիի խորթ հայրը։

Սի քանի ըստե անցած մենք արդեն Ատիկ-  
լեռը այս ըստ մենք է այս անցած մասունք է: Եթե այս անցած  
մասունք իրավաբանական է այս պահում մի նեղ անցքով,  
պարզ է այս պահում եթե գետնի մոտ են կիմունքների ձմեռ-  
ային խրճիթները յերբեք գուռ չեն ունենալու:





Այդ Խրճիթը մի  
այնպիսի զարմանալի  
շինություն եր, վորի  
նմանը յես կյանքումս  
չեյի տեսել: Նա ամ-  
բողջապես շինված եր...  
ձյունից: Թե հատակը,  
թե պատեղը, թե  
կտուրը, մինչև իսկ

սեղանն ու գահույքը\*, վորտեղ քնում եյին, —  
բոլորը ձյունից եյին: Ձյունից շինված սեղանի  
վրա դրված եր քարե լամպ, վորի մեջ պայծառ  
լույսով վառվող փոկի յուղը մարդու սիրտ եր  
ուրախացնում: Կրակի վրա կախված կաթսայի  
մեջ հալվում եր ձյունը խմելու ջուր գառնալու  
համար:

Տաք եր խրճիթում ու հաճելի, իսկ յեղջերվի  
մորթուց շինած փափուկ վերմակները, վորոնք  
փուփած եյին գահույքի վրա կարծես դեպի իրանց  
եյին կանչում հոգնած ու ցրտահար կաթու-  
նային:

Բայց քնել չեր կարելի, վորովհետև շարունակ  
հյուրեր եյին գալիս: Տեղի բոլոր տղամարդիկ  
հավաքվեցին Ատիկլեուրայի խրճիթը հայտնելու  
իրենց վողջույնը սպիտակ մարդուն: Նրանք հետ-  
ները բերել եյին մի բոլ յեղջերույի միս. սկսվեց  
խնձույքը և յերեք յերջերուների միսը զարմանալի  
արագությամբ կերան վերջացրին:

\* Սենյակի ներսում, պատերի յերկարությամբ շինած յերկար  
թախթեր, վորոնց վրա պակում և քնում են:

Խնձույքը վերջացնելուց հետո հանդես յեկան  
նաև կանայք և վողջունեցին ինձ՝  
— Մանիկառումի:

Նրանք մոտենում եյին ինձ, շոշափում, զլուխ  
տալիս և գուրս գնում:

Յերբ բոլորը հեռացան, յես մտա իմ քնելու  
պարկի մեջ և հանդիսատ քնեցի մինչև առավոտ:





#### IV. ՄԵՆՔ ՄՈՏ ՇԱԽՈԹՆԵՐ ԵՆՔ ԴԱՐՆՈՒՄ

Այդպես ահա սկսվեց իմ ծանոթությունը ես-կիմուների հետ։ Նրանք սիրում եյին մեր նավի բոլոր «կարլունաներին», բայց առանձնապես սերտ կապված եյին ինձ հետ։ Յես ել իմ կողմից նույնչափ սրտանց կապված եյի նրանց հետ։ Հաճախ եր պատահում, վոր լաքաններով գալիս եյի եսկիմուների մոտ և յերկու, յերեք որով մնում նրանց տներում։ Գիշերում եյի սովորաբար Ատիկ-լեռը այս խրճիթում և Մաննին շուտով դարձավ իմ ամենամոտ բարեկամը։

Զմռան կեսն եր, գեկաեմբեր ամիսը։ Շուտով պիտի սկսեյին եսկիմուների ձմեռային տոները և Ատիկլեռայի խրճիթում մեծ պատրաստություններ եյին տեսնում առաջիկա տոների համար։ Ատիկլեռը կինը Նալունիան ընտանիքի բոլոր անդամների համար կարում եր շորեր՝ գեղեցիկ հագուստներ յեղջերույի մուշտակից։ Պետք եր տեսնել, թե ինչպես եր նա աշխատում։

Քանի շատ եյի նայում նրա վրա, այնքան ավելի եյի զարմանում։ Համարյա բոլոր աշխատանքը նա կատարում եր բերնով։

Յեղջերույի նոր քերթած կաշվի վրա շատ ճարպ ե լինում միշտ, վորից պետք ե մաքրել կաշին։ Եսկիմուները դրա համար գործ են ածում առանձին դանակ, վոր կոչվում ե «ոլս»։ Այդ դանակով կանայք ամբողջ յուղը կտրում են ու մորթին մաքրում, փոռում են հատակի վրա և այնուհետև մորթին մաս-մաս ծամում են ու ծծում։

Յես մնում եյի զարմացած։

— Ինչո՞ւ յես այդպես անում, Մալունիա։  
— Միթե չգիտես ինչու, կարլունա։

Յեկ նա ծիծաղերով յույց եր տալիս ինձ ճարպի փոքրիկ կտորները, վորոնք մնացել եյին մորթու վրա մաքրելուց հետո։ Դրանցից պետք եր մաքրել մորթին, թե չե շորը ճարպու կլինի։

Յեկ եսկիմոս կինը այդ գործողությունը կատարում եր բերնով...։

Յերբ մորթին բոլորովին մաքրված եր ճարպից՝ Նալունիան կը պակի վրա բռնած չորացրեց, հետո նորից սկսեց մորթին ծամել ու ծամել շատ որեր...։

— Այս ել նրա համար եմ անում, — ասաց նա, — վոր մորթին փափուկ լինի, թե չե կարելը դժվար կլինի։

Իսկ շորը ձեելու ժամանակ Նալունիայի ատամները կավճի տեղ եյին ծառայում՝ նա ատամներով նշաններ եր անում։ Նալունիայի



չարչարանքները իզուր չանցան, շորերը գեղեցիկ եյին և հիանալի կարած, Յես նվեր ստացա նրանից յերկու գեղեցիկ «անորակե», մեկի մազը ներսից, մյուսինը՝ դրախց, վորոնց յես հաճույքով հագնում եյի շարունակ, յերբ ապրում եյի հյուսիսում:

Տոնին բոլոր հագուստ ները պատրաստ եյին: Յես առավոտվանից զարդարված եյի իմ նոր «անորակեներով» և սպասում եյի Մաննիին, վորը պիտի գար իմ յետեից:

Ահա և նա, մուշտակե նոր շորերը հագած, նա այնքան գեղեցիկ եր և այնքան զարդարված, վոր սկզբում յես նրան չճանաչեցի:

Բարե Մանիի:

— Մանիկտումի: Շտապի գնանք, կաբլունա, տոնակատարությունը արդեն սկսվել եւ:

Լաքաններս հագա և մենք ճանապարհ ընկանք: Եսկիմուների տները դատարկվել եյին, բայց տոնական «փլուն» (խրձիթը) լիքն եր ժողովը դուլ: Այնտեղ յերգում եյին, պարում, մարմնամարզություն անում և այնպէս եյին աղմկում, վոր շուտով գլուխս սկսեց ցավել: Իգլույից դուրս յեկա և կամաց կամաց գնացի գեպի Ատիկլեուրի խրձիթը: Հանկարծ ականջիս հասավ բարձր ու յերկայն զոռնոցի նման մի ձայն: Առաջ կարծեցի, թե գա յերգ եւ եսկիմուների յերգը ինձ միշտ վոռնոց եր հիշեցնում: Բայց յերբ ներս

սողացի: Ատիկլեուրի խրձիթը, զարմանքից մնացի ապշած իմ տեսած տարորինակ տեսարանից, Զե, դա յերգ չեր: Խրձիթում տիրում եր կիսախավար: Գահույքի վրա նստած եր մի ծերունի՝ եսկիմուների «մեծ կախարդ»՝ Պրեգերիկը, իսկ նրա կողքին կինը՝ մի զզվելի ու կեղտոտ պառավի: Ատիկլեուրայի ու նրա յեղբոր Պոյյետի ամբողջ ընտանիքը կանգնած եյին մի փոքր հեռու: Բոլորի կերպարանքները լուրջ եյին և խորհուն: Պառավ կախարդուհին բարձր աղաղակում եր, իսկ ծերունին սարսափելի վոռնում:

Յես կուանեցի, վոր դա եսկիմուական կախարդանք եր. քիչ ե պատահում, վոր ոտարներին վիճակի դիտելու այլպիսի մի տեսարան, վորովիետե կախարդանքը այնպիսի մի սրբագործություն ե եսկիմուների համար, վորին ոտարները չպետք ե ներկա լինեն:

Յես կանգ առա մուտքի մոտ ստվերում, սակայն պառավի ինձ նկատեց:

Յեվ ինչպիսի սարսափելի աղաղակ բարձրացրեց նա:

Յես հասկացա, վոր պետք ե հեռանամ և ցավոք սրտի գուրս սողացի խրձիթից:

Շատ չանցած Մաննին ել դուրս սողաց: Նրա յերեսը սփրթնած եր և լուրջ: Նա գողգողուն ձայնով ասաց ինձ՝

— Վերջը վատ յեղավ, Պրեգերիկը ինքն իրեն խոցեց նիզակով...

Յես մնացի ապշած, բայց յերբ մտա խրձիթը, տեսա Պրեգերիկին գահույքի վրա հանգիստ նստած:




\* \* \*

Ճշմարիտ ե, նրա «անորակեյի» վրա յերկու ծակ կար, մեկն առաջից մյուսը՝ յետեից։ Այդ ծակերին նայելիս եսկիմոսները հավատում եյին, վոր նա հիբավի ինքն իրեն խոցել և նիզակով։ Գուցե «մեծ կախարդը» ինքն ել եր հավատում...

Տոները տևեցին մի քանի որ և ամեն որ «մեծ կախարդը» կախարդական ծեսեր ե կատարում մեկի կամ մյուսի խրճիթում։ Կերուխումը գնալով մեծանում եր, կերած մաին հաշիվ չկար, իսկ տոնական իզլույի մեջ շարունակվում եր

անասելի աղմուկը։ Յես հոգնեցի ալդ բոլորից և շատ ուրիսացա, յերբ տոները վերջացան և յես, Մաննին ու Ատիկլեուրան կարողացանք հանգիստ շունչ քաշել խրճիթում։ Ինչքան հանգիստ, լավ և անդորր եր խրճիթում։ Ատիկլեուրան «կայակ», այսինքն մակույկ եր շինում ծովի վրա վորս անելու համար։ Մաննին ոգնում եր նրան, հյուսային յեղջերույի պինդ ջլերով միմյանց կապելով փայտե մասերը, Նալունիան կար եր անում, իսկ յես ծխում եյի իմ չիբուխը և վայելում հանգիստ ու անդորր կյանք։ Լինում եյին յերեկոներ, յերբ մեզնից վոչ մեկը վոչ մի խոօք չեր արտասանում։ Եսկիմոսները առհասարակ սակավախոս են։



Տոներից հետո յես վերակարձա նավը և մոտ մեկ ամիս եսկիմոսների մոտ չգնացի։ Իսկ յերբ գնացի, տարորինակ բան ընկավ աչքով։ Մաննին սաստիկ նիհարած եր և աչքերը տենդային փայլ ունեյին։ Ատիկլեուրան մոայլ եր, Նալունիան նիհար և տիսուր։

— Մաննի, այդ ի՞նչ ե պատահել ձեզ։


— Միս չկա, սոված ենք։

— Իսկ ի՞նչ յեղավ ձեր ունեցած միսը։ ԶԵ  
 վոր մսի մեծ պաշար ունեյիք։  
 — Կերանք։ Ինչքան կար, բոլորը տոներին  
 կերանք, պրծանք։  
 — Հապա ինչու վորսի չեք գնում։  
 — Այժմ չի կարելի, վաղ ե, ձյունը քիչ ե։  
 — Բայց չե վոր փոկին դուք սպանում եք  
 ջրի մեջ, հենց սառույցի տակը։  
 — Այո, բայց հիմա դժվար ե փոկի տեղը  
 գտնելը։ Սառույցի վրայով գնալիս նա լսում ե  
 վոտնաձայնը և հեռանում։

— Իսկ յԵՐԵ կարելի կլինի վորսի գնալ։  
 — Հետո, յԵՐԵ շատ ձյուն կդա։  
 Հիրավի, քիչ ուշ, փետրվարի մեջերքին, քա-  
 մուց սառույցի վրա ձյունի այնպիսի կույտեր  
 են կազմվում, վոր մի քանի մետր հաստություն  
 են ունենում։ Այն ժամանակ վորսորդների զգույշ  
 քայլերը լսելի չեն լինում սառույցի տակը, փո-  
 կերին չեն փախցնում և դժվար չի լինում գտնել  
 թեկուզ ամենախելոք փոկի հետքը։ Այդ ժամա-  
 նակից սկսվում են եսկիմոսների «մեծ վորսի»  
 որերը։ Իսկ հունվարը և փետրվարի առաջին կեսը,  
 մինչև մեծ վորսի սկսելը, սովոր ամիսներ են ես-  
 կիմոսների համար։ Ամենալավ վորսորդների մոտ  
 անգամ, ինչպես Ատիկլեուրան եր, այդ ժամա-  
 նանակ պաշարները վերջացած են լինում։ Իսկ  
 ով ծույզ ե և լավ վորս անել չգիտե, սովոր ժա-  
 մանակ նրա զրությունը ավելի վատթար ե լի-  
 նում։ Ատիկլեուրան մի հարևան ուներ կատ-  
 ակ-կյա անունով։ Նա աղքատ եր և վոչ մի

պաշար չուներ։ Նրա կինը Պոռնարլուն և յԵՐԵՔ  
 փոքրահասակ յԵՐԵԽԱՆԵՐԸ բոլորովին ուժասպառ  
 եյին յԵՂԵԼ սովից։

Մի անգամ Պոռնարլույին տեսա մեր նավի  
 մոտերքում։ ՅԵՐԵԿՈՒՄ եր, վոր մի բան ե փնտրում



— Այդ ի՞նչ ես անում, Պոռնարլու։

Նա մի փոքր շփոթված պատասխանեց՝

— ՅԵՐԵ կաբլունան թույլ տա, Պոռնարլուն  
 կվերցնի... այս բաները։

— Այդ ասելով նա ցույց տվեց ձյունի մեջ  
 , մեր շների սառած կղկղանքը։ ՄԵՐՆՔ կերակրել  
 եյինք շներին չորացրած ձկնովու ճարպով։ ՇՆԵՐԸ  
 վատ եյին մարտում այդ կերակրուրը, այդ պատճա-  
 ռով նրանց կղկղանքում գտնվում եյին կերակրի  
 չմարսված մնացորդները։ Իսկ խեղճ Պոռնարլուն  
 սովածությունից հավաքում եր այդ մնացորդ-  
 ները և նրանցով կերակրում իր յԵՐԵԽԱՆԵՐԻՆ։

Այդ վոր տեսա, սարսափեցի։

— Գնանք, գնանք Պոռնարլու, յԵՐԵ քեզ  
 ուտելու ուրիշ բան կտամ։

Յես նրան տարա նավը և տվեցի Ճռւկ, միս  
և ճարպ: Խեղճ կիսը ուրախությունից չեր իմա-  
նում ինչ անք: Բայց յերբ նա գնում եր, տեսա, վոր  
կղկղանքներն ել դարձյալ հավաքեց ու հետը  
տարավ:

Իսկ նրա ամուսինը՝ Կատա-ատակ-կյան մի ան-  
դամ ամառը յեկավ ինձ մոտ և խնդրեց, վոր  
նվիրեմ իրեն այն ստամոքսը, վոր անցյալ աշ-  
նանից ընկած եր ծովափում: Այս ստամոքսից  
յեշի և հոտած մսի գարշելի հոտ եր գալիս, բայց  
Կատա-ատակ-կյան մեծ ախորժակով կերավ: Մի  
քանի որից հետո, իր շնորհակալությունը հայտ-  
նելու համար, Կատա-ատակ-կյան ստացած «ընծայի»  
փոխարեն բերեց ինձ համար մի քանի հրաշալի  
կարմրախայտներ...



## V. «ՄԵՇ ՎՈՐՍԸ»

Յերբ պիտի վորսի գնանք, Մաննի:  
— Շուտով կդնանք, կարլունա, տես ինչքան  
ձյուն ե յեկել:

Յեվ Մաննին կարոտ աշքերով նայում եր  
ձյանը: Վաղուց եր, ինչ նա միս չեր կերել...

Յես ել անհամբեր սպասում եյի փետրվարին:  
Եսկիմոսները համաձայնեցին վորսի գնալիս ինձ  
ել հետները տանել: յերեք չեյի տեսել, ինչպես  
են վոկ վորսում: Յես որերը համբում եյի և  
ամեն անգամ յերբ ձյուն եր գալիս, սիրտս  
ուրախությունից թրթռում եր, մտածում եյի  
մի — յերկու կամ յերեք որից հետո կարելի կլնի  
վորսի գնալ:

Այդ որը վերջապես յեկավ, մենք վաղը վորսի  
յենք գնում:

Եսկիմոսները բոլորը սաստիկ հուզված ելին:  
Միայն թե վորսը հաջող լինի, այն ժամանակ  
կմոռացվեն թե զրկանքները, թե սովը:

Յերեկոյան մեծ իգլույի մեջ ուրախ տոն կա-  
տարեցին: Մաննին, իր ամենաչափ ասեղնագործ  
շորերը հաղած, հետը բերել եր մի կալառուդի՝  
այդ ցեղի միակ յերածշտական գործիքը, վոր  
թմբուկի պես մի բան եւ Նա խփում եր կալառ-  
դին և հետը յերգում ու տատանվում մի կող-  
մից մյուս կողմը, իսկ նրան շրջապատած ու  
շրջան կազմած ջահենները «յերգում եյին»: Այդ  
յերգը մի սարսափելի բան եր, բայց եսկիմոս-  
ների կարծիքով հիանալի յեր:

Յերբ տոնակատարությունը վերջացավ, Ման-  
նին մոտեցավ ինձ փայլուն աչքերով ու հար-  
ցրեց:

— Լավ եյի յերգում, չե՞ն, կաբլունա: Վոր  
իմանաս յես ինչպես եյի աշխատում, վոր աստ-  
վածները մեզ լսեն: Հավատացած եմ,  
վոր վաղը վորսը հաջող կլինի:


Իսկ այդ վաղը մի ցուրտ ու մուայլ  
առավոտ եր: Փչում եր հյուսիս-արև-  
մտյան քամին և հետը բերում ձյան  
փոշի: Բայց եսկիմոսների ընակատե-  
ղում կենդանություն եր տիրում...  
Առավոտյան ժամի ուժին հավաքվել  
եյին իգլույի մեջ քառասունի մոտ ես-  
կիմոս: Բայցը աղամարդիկ եյին 15-ից  
մինչև 50 տարեկան: Նրանցից յուրա-  
քանչյուրի ուսովը գցած փոկի զայիշ-



ներից կախված մի-մի վորսորդական պարկ:  
Պարկերի մեջ կային վորսորդական գործիքներ:  
Շատերը հետները շներ ել եյին տանում:

Մաննին ել նրանց մեջն եր, նրա տրամա-  
դրությունը լուրջ եր և հանդիսավոր: Նա այժմ  
15 տարեկան եր և այս նրա առաջին անգամ մեծ  
վորսի գնալն եր:

Ժամի մոտ իննին իգլույից դուրս յեկան:  
Սկզբում բոլորը գնում եյին միասին, բայց յերբ  
հասան սառուցիցին, բաժանվեցին խմբերի: Մա-  
սույցի վրա յուրաքանչյուր խումբ գնում եր  
առանձին և զանազան ուղղությամբ: Յես գնում  
եյի Մաննիից վոչ հետու: Մեր առջևից վազում  
եյին շները:



Մեկ ել Մաննիի շոնը մի կողմ վազեց և  
փորը ձյունին կպցրած մնաց անշարժ: Մաննին  
ցնցվեց ու ասաց, փոկի հոտ ե ասել: Մի ակն-  
թարթում նա մոտեցավ շանը և փայտը խրեց  
ձյան մեջ: Հետո պարկը վայր դրեց ուսից ու սկսեց  
մաքրել փայտի չորս կողմի ձյունը: Յես նայեցի  
ու տեսա, վոր մեծ բացվածք կա սառույցի վրա:

Դեպի այդ բացվածքներն են լողում փոկերը  
թարմ ու չնշելու համար:

Բայց կարելի յե այդ վաղուցվանից մնացած  
բացվածք ե, վորին փոկերը այլևս չեն մոտե-  
նում: Մաննին փորձում ե այդ ստուգել: Նա փորի  
վրա ընկած պառկեց ձյան վրա և բացվածքից  
հոտ քաշեց: Նա սուր հոտառություն ուներ, և  
յերբ զլուխը բարձրացրեց, յերեսը ուրախությու-  
նից փայլում եր: Այո, ուղիղ ե, փոկը յեղել ե  
այստեղ և շուտով անկասկած դարձյալ կլինի:  
Յես շատ լավ առնում եմ փոկի հոտը...

Մաննին ուրախությունից չեր իմանում ինչ  
անի, հետո խնամքով բացվածքը ձյունով ծածկեց:

— Այդ նրա համար եմ անում, — բացատրեց  
նա, — վոր փոկը չվախենա, յեթե ժամանակից  
առաջ մոտենա բացվածքին:

— Բայց դու ի՞նչպես կիմանաս, Մաննի, վոր  
փոկը մոտեցել ե:

— Այդ յես իսկույն ցույց կտամ կարլու-  
նային:

Այդ ասելով Մաննին իր համար դիտելու տեղ  
պատրաստեց, ինչպես անում են վորսորդները:  
Նա փորեց ձյան մեջ մի փոս, վոր համում եր  
մինչեւ ստուցի վրա յեղած բացվածքը, այնուհետեւ  
ձյան փոսը մի փոքրիկ անցքով միացրեց սա-  
ռույցի բացվածքի հետ, վորից հետո նա սարքեց իր

վորսորդական գործիքը, վոր պետք ե ցույց տար  
փոկի մոտենալը: Սյու գործիքը բաղկացած եր  
յեղջերվի յերկու յեղջյուրներից, վորսոնցից մեկը  
20 սանտիմետր յերկարություն ուներ, մյուսը  
յերկու անգամ նրանից յերկար եր: Յերկու յեղ-  
յուրների ծայրերը միացած եյին յերկար թերով,  
իսկ յերկար յեղջյուրի ծայրին ամրացրած եր տասը  
կոպեկանոցից մի քիչ փոքր փոսկորե թիթեղ:

Յես կանգնած նայում եյր Մաննին և վա-  
խից տեղիցս չեյի շարժվում: Ինձ նախազգու-  
շացրել եյին, վոր փոկ վորսալիս վոլքան կարելի  
յե քիչ պետք ե շարժվել ձյան վրա: Բայց բնր-  
քան վարպետորեն եր կատարում եր գործը  
փոքրիկ Մաննին: Ճիշտ այնպես, ինչպես կաներ  
ամեն մի կատարյալ վորսորդ: Նա վերցրեց իր  
գործիքը, վորը եսկիմոսները կոչում են «իլլա»,  
կարճ յեղջյուրի սուր ծայրը խրեց ձյան մեջ,  
իսկ յերկար փոքր անցքի միջով անցկացրեց  
այնքան, մինչև թիթեղը համար ջրին: Յեղջյուր-  
ների սուր ծայրերը միացնող թեր հանգիստ  
ընկած եր ձյան վրա:

Այդ բոլորը պատրաստելուց հետո Մաննին  
կարգի բերեց մնացած վորսորդական պարագա-  
ները: Գլխավորը դրանց մեջ հարպունն ե: Դա  
չափազանց սուր յերկաթե տեգ ե, վոր ունի  
փայտե յերկար կոթ: Հարպունի սուր ծայրին  
կապված ե պինդ ու յերկար պարան, վոր հյուս-  
ված ե յեղջերվի ջերից:

Մաննին պինդ բունել եր պարանը ձախ ձեռ-  
քով, իսկ աջ ձեռքով՝ հարպունի կոթը: Նա աջքը

«իլլայից» չեր<sup>7</sup> հեռացնում, նրա մկանները լաբ-  
ված եյին: Նա պատրաստ սպասում եր ժամանա-  
կին հարվածը հասցնելու:

Յես ել ակամայից համակվեցի նրա տրամադ-  
րությամբ և նույնպես աչքս «իլլայից» չեյի  
հեռացնում: Իսկ սիրտս ավելի ու ավելի արագ  
եր բարախում...



Վուկը թիթեղը<sup>8</sup> հանդարտ շարժվում եր ջրի  
յերեսին, մեկ բարձրանում, մեկ իջնում եր: Մեկ  
ել նկատեցի, վոր յերկար յեղջուրը սահեց և  
սուզվեց ջրի մեջ, իսկ միացնող թելը ձգվեց:

Յես հասկացա, թե այդ ինչ ե նշանակում,  
Մաննին ինձ բացատրել եր: Փոկը գունչը ջրից  
հանելիս սառուցի կտորանքի հետ միատեղ մի  
կողմ եր հրել նաև «իլլայից» թիթեղը:


Մաննին այդ տեսնելուն պես կայծակի արա-  
գությամբ լրեց տեղը բացվածքի մեջ: Հարպունի  
սուր ծայրը ծակեց ու մտավ փոկի կաշվի մեջ:  
Վորսորդի հարվածը շեշտակի յեր, դրանում կաս-  
կած չկար:

Մաննին տեղը հետ ե քաշում, բայց հանում  
ե միայն կոթը, իսկ տեղի սուր ծայրը գուրս չի  
գալիս, մնում ե փոկի մարմնի մեջ, վորովհետեւ  
նրա վրա յերկու ատամներ կան, վորոնք ծռված  
են գեպի վեր: Դրանք են, վոր չեն թողնում տեղի  
սուր ծայրը փոկի մարմնից դուրս գա:

Վիրավորված փոկը հարպունը մարմնի մեջ  
լողալով հեռանում ե վտանգավոր տեղից, բայց  
հարպունին կապած ե պարան, վորի մի ծայրը  
պինդ բռնած ունի

Մաննին:

Փոկը միայն այն-  
քան կարող եր հեռա-  
նալ, վորքան թույլ  
կտա պարանը: Հետո  
նորից պետք ե վերա-  
դանա բացվածքի  
մոտ, վոր շունչ քաշի,  
իսկ յեթե չկերա-  
դանա, շնչասպառ  
կլինի կստակի:



Մաննին սպասում ե պարանը ձեռքին պինդ  
բոնած: Իսկ յես ուշադրությամբ նայում եմ  
նրան:

Ինչպես ե կարմրել նրա յերեսը: Յերեսում ե  
դժվարությամբ ե պահում պարանը: Նկատեցի,  
վոր նա յերկու ձեռքով հազիվ ե կարողանում  
պահել պարանը: Մեկ ել տեսա, նա վայր ընկավ  
և նրա գլուխն ու ուսերը թաղփեցին ձյունի մեջ:

Յես վաղեցի նրա մոտ: Նա ընկած եր սա-  
ռուցի վրա, ուղղակի բացվածքի վերևու: Նրա  
ձեռքերն ու ուսերը սառցի տակն եյին: Գլուխը  
դեռ կարողանում եր բարձր պահել, բայց թվում  
եր, վոր հիմա վորտեղ վոր ե, գլուխը ջրի տա-  
կովը կլինի:

Մաննին բարձր գոռում եր՝

— Շուտ արեք, ոգնության հասեք:

— Մաննի, Մաննի, բաց թող պարանը:

Վոտքս սահեց և յես վայր ընկա նրա կող-  
քին: Կոշիկներիս մեջը լիքը ձյուն եր լցվել:  
Յերկու ձեռքով պինդ բոնեցի Մաննիի իրանից:

— Բաց թող պարանը, շուտ...

— Ի՞նչ ես սառում, թողնեմ փոկը փախչի,  
չե, չե, կարլունա...

— Ոգնեցէք, ոգնեցէք...

Մաննիի մկանները լարված եյին ծայր աս-  
տիճան: Նա ուժասպառ եր լինում, բայց պա-  
րանը սառուցի պես սառը ջրում պինդ պահում  
եր իր ձեռքում:

Չեյի իմանում ինչպես ոգնեմ այդ համառ  
տղային: Յես ճիզ եյի անում նրան դուրս քաշել

Ջրից, բայց չեյի կարողանում: Յերեսում եր, վոր  
փոկը մեր յերկուսից ուժեղ եր...  
— Ատիկլեռութ, Պոյյետի, Տոլիման, հասեք,  
շուտանվ...

Տեսնում եյի, մի քիչ ել վոր մնա, Մաննիի  
գլուխը ջրի տակովը կլինի:

— Բաց թող, քեզ ասում եմ, բաց թող պա-  
րանը, Մաննի, հիմար մի յեղիբ: Դու հետո մի  
ուրիշ փոկ կբռնես, վոր այդքան մեծ և ուժեղ  
չի լինի:

Մաննին գլուխը բացասաբար շարժեց:

— Զե, չեմ թողնի...

Նրա շրթունքները կապտել եյին, վզի յերակ-  
ները ուռել: Նա այլևս ույժ չուներ գոռալու: Յես  
նրա կողքին սառուցի վրա պառկած ու նրան  
պինդ բռնած՝ վորքան ույժ ունեյի գոռում, ոգ-  
նության եյի կանչում: Միթե վոչ վոք չի լսում  
մեր ձայնը:

Բայց մեզ լսել  
եյին: Տեսա, վոր  
ձյան վրայով մեր  
կողմն են վազում  
եսկիմոսները՝ առաջ  
յերեաց մեկը, հետո  
յերկուսը, յերեքը,  
վերջը ամբողջ հինգ  
հոգի:

Առաջինը մեզ  
մոտեցավ Ատիկ-  
լեռութան, նրա յե-



տեից Տոլիմառն: Ահա նրանք մեր կողքին են և Ատիկլեռան ջարդում ե մուրճով սառույցը, վոր անցը մեծացնի, իսկ Տոլիմառյի ձեռքերը ջրի տակին են: Նա խլում ե Մաննիի ձնոքից պարանը և ջրից գուրս քաշում, իսկ Ատիկլեռան հանում ե ջրից Մաննիին և պառկեցնում սառույցի վրա:


Բայց նրանց ուշըն ու միտքը փոկի վրա յեր: Յերեսում ե շատ մեծ փոկ ե, տես ինչ մեծ ծակ ե բաց արել դունչը դուրս հանելու համար: Տոլիմառն պինդ բռնել ե պարանը, իսկ Ատիկլեռան նրան ոգնում ե: Նկատելի յե, վոր պարանը առաջվա պես ուժեղ չի ձգվում, ուրեմն փոկը լողում ե դեպի բացվածքը շունչ քաշելու: Տոլիմայոն պարանը տալիս ե Ատիկլեռային, իսկ ինքը վորսորդական նիզակը ձեքին սպասում ե... Ահա յերեսում ե խոշտանգված կենդանու դունչը:

### Շըալիկ:

Նիզակն իր յերկաթե կոթով մտնում ե փոկի աչքի մեջ և հասնում ե մինչև ուղեղը: Այժմ ամեն բան վերջացած եր, փոկը սպանված ե:

Տոլիմառն ծակեց նրա վերին շրթունքն ու թուշը և անց կացրեց նրանց միջով: Նա ուզում եր այդ զայլշով սպանված կենդանուն դուրս քաշել ջրից: Բայց կենդանին մեծ եր, բացվածքից դուրս չեր գախու: Նրան ոգնեցին մյուս ընկերները, վորոնք կոտրեցին սառույցը և կենդանուն դուրս քաշեցին ջրից:

Ահա փոկն ընկած ե ձյան վրա: Ի՞նչ ահազին



բան ե: Միթե Մաննին մենակ կարողացել ե թուկից բռնած նրան պահել: Չե վոր Մաննին դեռ յերեխա յե: Այս առաջին անգամն ե, վոր նա փոկ ե վորսում: Եսկիմոսները հիացած նայում են նրա վրա: Ի՞նչ կտրիչ տղա յե այդ Մաննին:

Մաննին գոհ եր և բախտավոր: Յես մոտեցա նրան և ձեռքս դրի նրա ուսին:

- Քեֆդ ի՞նչպես ե, Մաննի:
- Կարլոնա, մի տես ի՞նչ փոկ ե...
- Դու շատ կտրիչ տղա յես, Մաննի:
- Յես յերեկ կալառուզի եյի ածում, աղոթք եյի անում, աստվածները լսեցին ինդիբքս:
- Մաննիի գեմքը լուրջ եր: Նա հաստատ հավատացած եր, վոր աստվածների պարզեած ուժովն եր, վոր նա կարողացավ փոկին պահել:
- Եսկիմոսները խոնվել եյին փոկի չորս կողմք, ծիծաղում, բարձր աղաղակում եյին և նայում Մաննի վրա: Նրանք սպասում եյին մի բանի:
- Մաննի:

Յեկ ծերունի եսկիմոսը մի բան ասաց նրան, վոր յես չհասկացա:

Մաննին ցնցվեց: Նա մոռացել եր, վոր հա-  
ջողակ վորսորդը պարտավոր ե հյուրասիրել ըն-  
կերներին: Լուրջ կերպարանքով նա մոտեցավ  
փոկին, հանեց կոշիկից դանակը և ճղեց փոկի  
փորը: Վերքից արյուն հոսեց, բայց վաչ վոք ուշ  
չդարձրեց դրա վրա:



— Այս քեզ, Ատիկլեռա:

Մաննին գլուխը խոնարհած մեկնեց հորը  
փոկի յերիկամունքի մի յուղալի կտոր:

— Այս ել քեզ, Պոյյետի, այս ել քեզ Տոլի-  
մառ, այս ել քեզ, Կատա-ատկ-կեա:

Յերիկամունքն ու լյարդը արագ կերպով բա-  
ժանվեցին: Բոլորը հաճույքով ուտում եյին: Վոր-  
քան ժամանակ ե նրբնք թարմ մսի համ չեյին  
տեսեք Բայց գեռ ճարպ ել կա... Մաննին կտրա-  
տում ե ճարպը և բաժանում մանր կտրների:

— Հազա դու ինչու չես ուտում, Մաննի:

— Սպասի, դեռ  
ինձ չի կարելի: ԶԵս  
տեսնում, վորից դեռ  
արյուն ե հոսում:

Ծես շատ լավ տես-  
նում եյի, բայց չեյի  
իման ում, ինչպես  
պիտի Մաննին արյու-  
նահոսության առաջն

առնի: Բայց յերկում եր, Մաննին գիտի դրա  
միջոցը: Նա սառույցը մանր ջարդեց, խառնեց  
ձյան հետ և դրեց վերքի վրա,

Զյունախառն սառույցն իսկույն պնդացավ  
և շատ լավ վիրակապ դարձավ:

— Ծես, ել արյուն չկա:


Մաննին այդ մի առանձին հրձվանքով ասաց:  
Նա լսել եր, վոր կաբլունաները կախարդներ են,  
ինչ ասես նրանց ձեռքիցը գալիս ե: Բայց բանից  
դուրս ե գալիս, վոր վոչինչ չգիտեն, չեն կարո-  
ղանում անզամ դադարեցնել փոկի արյունհո-  
սությունը:

— Այժմ տվեք ինձ իմ բաժին ճարպը:


Վորսորդները ճանապարհ են բաց անում, վոր  
Մաննին անցնի: Բոլորը հարգանքով են նայում  
նրա վրա:

Մաննին առոք-փառոք մոտենում ե փոկին,  
նստում ե մոտը և սկսում ե ուտել: Բոլորը լուռ  
սպասում են, մինչև նա վերջացնի:

Բոլորը կերել կշտացել եյին, ժամանակ եր  
տուն գնալու: Վորսը առանում եյին դայիշներով



լծված շները։ Մաննին գնում եր մի կողքից և  
անդադար խոսում եր։ Յես նրա ասածներից  
շատ բան չեյի հասկանում, բայց տեսնելով նրա  
ուրախությունը յես ել եյի ժպտում և զլխով  
եյի անում ի նշան համաձայնության։



## VI. ՄԱՆԻՆ ԱՐՁ Ե ՍՊԱՆՈՒՄ

Շները վազում եյին մեր առջևից։ Փոկին  
քաշում եյին միայն յերեք շուն, մնացածները  
աղատ եյին։

Հանկարծ նրանք կանգ առան, հոտոտեցին  
ողը և կատաղածի պես վազեցին մի կողմ։

Եսկիմոսների մեջ իրարանցում տիրեց։

— Արջ ե, սպիտակ արջ ե...

Յեզ հիրավի, միմյանց վրա կուտակված սա-  
ռույցների վրա, բարձրում յերևաց մի արջի  
ահագին և անձոռնի մարմինը։

Արջը գեռ լավ չեր զգացել վերահաս վտանգը,  
յերբ շները նրան պաշարեցին չորս կողմից։ Նրանք  
ամեն կողմից հարձակվում եյին արջի վրա, հա-  
ջում և բարձր վազում եյին։

Արջը մոնչաց և թաթով խփեց մի շան։ Շունը  
մի կողմ ընկալ, բայց անմիջապես նորից հար-

ձակվեց արջի վրա: Արջը թաթերով աջ ու ծախ խփում եր շներին ու նրանց շպրտում այս ու այն կողմը, աշխատելով մի կերպ ճանապար բանալ իր համար այդ անտանելի կծոտողների միջով: Մի վարկյան այդ նրան հաջողվեց, նա դուրս պրծավ շների ողակից ու փախափ: Բայց շները հասան նրան և նորից շրջապատեցին, ճարպիկությամբ խույս տալով նրա ծանր թաթերի հարգաճներից:

Արջը կատաղել եր. մեկ այս կողմն եր ընկնում, մեկ այն կողմը: Իսկ շները վազվկում եյին նրա չորս կողմը և չելին թողնում, վոր նա փախչի:

Եսկիմոս վորսորդների ուզածն ել հենց այդ եր: Նրանք շտապում եյին միանալ շներին՝ պատրաստ պահած ձեռքներին վորսորդական ծանր տեգերը:

Մաննին լուս եր և նրա յերեսը սպրդնել, գաջի գույն եր ստացել, նա ինքն իրեն մի բան եր փնթվնիտում: Ո՞վ գիտի, գուցե նա հաջող վորսի աղոթքն եր ասում:

Արջն ահա մոտ ե: Վորսորդները տեգերը ձեռքներին պատրաստ բոլորը միանդամից հարձակվեցին կատաղած գաղանի վրա:

Արջն ել իր կողմից թաթերը բարձրացրած հարձակվում ե վորսորդներից մեկն կամ մյուսի վրա: Տոլիմառն չկարողացավ ժամանակին յետ փախչել և արջի ծանր թաթը պետք ե իջներ նրա ուսին, բայց հենց այդ

վարկյանին Պոյյեսին յետեկից տեգով հարվածեց արջին: Արջը գոռաց և հետ զարձավ, բայց Պոյյետին արգեն հեռու յեր, Տոլիմառն ել հակառակ կողմը փախափ:

Տեզի հարգաճները կարկուտի պես թափում եյին խեղճ գազանի վրա: Ցավից նա մոնչում ու վոռնում եր և թաթերով աշխատում հարվածել իրեն վիրավորողներից մեկին կամ մյուսին:

Հանկարծ նա կանգ առավ, նայեց շուրջը և վազեց ուղիղ դեպի Մաննին: Վորքան Մաննին փոքր և թույլ եր յերեսում այդ ահազին գազանի հանդեպ: Մաննին տեղը ձեռքին պատրաստ բրոնած և անշարժ կանգնած սպասում եր: Այդ վարկյանին աչքովս ընկան նրա թուխ աչքերը, վորոնք կրակի պես փայլատակում եյին: Թվում եր, վոր նա բացի իրեն մոտեցող արջից ուրիշ փոչինչ չեր տեսնում: Բայց ինչո՞ւ յե նա այդպես անշարժ կանգնել: Զիննի թե վախից: Բայց մի վարկյան ևս և արջը կառկի նրա գանգը:

Սարսափը տիրեց ինձ և յես բարձրացրի հրացանս, բայց արձակելու ժամանակ չունեցա: Մաննին արագ կուցավ և արջի բարձրացրած թաթը հարվածեց ողը, իսկ նրա բաց յերախի մեջ ցցվեց Մաննիի տեղը:

Արջն ահոելի կերպով գոռաց, բայց Մաննին արդեն փախուստ եր տվել նրանից, իսկ Տորիար հարվածեց արջի գանգին յետեկից:

Սատկած արջն ընկած եր ձյան վրա: Վորսը վերջացել եր և հաղթողը դարձյալ Մաննին եր: — Կաբլունա, յես այսոր յերկու-յերկու

մորթի կստանամ՝ փոկի և արջի մորթիները,  
նույնպես և փոկի աղիքները:

— Այս, Մաննի, դու իսկապես վոր քաջ  
վորսորդ ես: Յես քեզ մի հրացան կնվիրեմ:



\* \* \*

Մենք արդեն տանն ենք: Սպանված կենդա-  
նիների միսն ու ճարպը բաժան-բաժան են անում  
բոլորի միջև, իսկ մորթիներն ու աղիքները  
մում են Ատիկլեուրայի տանը:

Մաննին, ինչպես և նրա հայրը, վորսի վոտ-  
ները լուռ դնում են մոր առաջ: Մաննին այժմ  
հայտնի վորսորդ եւ և նրան վայել չի շատ խո-

սել: Մայրը քաշում ե նրա վոտներից կոշիկները  
և նա պառկում ե գահույքի վրա հոր կողքին,  
ի՞նչ հաճելի բան ե յերկար ու բարակ մեկնվել  
ու հանգստանալ դժվար վորսից հետո:

Ինչ լավ ե այժմ ձյունե խրճիթի մեջ կամպի  
մեջ շատ ճարպ կա և նա պայծառ լույս ե տա-  
լիս: Կրակի վրա կախված կճուճի մեջ յեփում  
են փոկի աղիքները:

Ատիկլեռայի տղա փոքրիկ Աննին մորից  
արդեն ստացել ե մի կտոր աղիք: Նա գահույքի  
վրա նստած ուտում ե աղիքը և աչքի պոչով  
նայում իր նշանափոք յեղբորը, նա մեծ ցանկու-  
թյուն ունի հարց ու փորձ անել յեղբորը այ-  
սորվա վորսի մասին:

— Մաննի, պատմի, դու ինչպես սպանեցիր  
արջին:

Բայց Մաննին նրան մարդու տեղ չի գնում  
և վոչինչ չի պատասխանում: Նա այժմ մեծ  
տղամարդ ե դարձել և կարիք չունի գլուխ  
դնելու յերեխաների հետ:

Աննին կամացուկ հոգոց ե հանում: Նա ինչպես  
և այժմ նախանձում Մաննին և ինչպես ե ուզում  
շուտով մեծանա և Մաննի պես վորսի գնա...



## VII. ՎՈՐՍԻ ՅԵՆՔ ԳՆՈՒՄ ԿԱՅԱԿՈՎ\*

Շուտով կզա գարունը: Ատիկլեռայի խրճի-  
թում նստած նայում եմ, ինչպես և նալունիան  
պատրաստում փոկի մորթիները կայակի վրա քա-  
շելու համար: Նա մորթին նախ ծամում ու  
ծծում ե, ապա կրակի վրա բոնած տաքացնում:  
Մորթիները մենակ կայակի վրա քաշելը նրա  
ուժից վեր ե, նրան ոգնում են հարկանուճիները՝  
ուրիշ եսկիմոսների կանայք: Իր հերթին նալու-  
նիան ել նրանց կողնի, յերբ նրանք քաշելու լի-  
նեն մորթիներ կայակէ վրա:

Մաննին նստած ե իմ կողքին գահույքի վրա,  
յես արդեն բավական սովորել եյի եսկիմոսներն  
և պատմություններ եմ անում նրան «կաբլունա-  
նունիի», այսինքն սպիտակամորթների յերկրի  
մասին:

Մաննին լսում եր մեծ հետաքրքրությամբ:

— Մաննի, կզամ մեզ հետ գնանք կաբլու-  
նանունի:

\* Եսկիմոսների մակույկ: Վոր շինված ե լինում փայտից ու  
փոկի կաշուց:

— Իսկ կաբլունան ինձ կտանեն իրենց հետ:  
— Ինչու չե, կտանեն:

Մենք իսկապես շատ եյինք ուզում մեր հետագա ճամբորդության ժամանակ հետներս մի եսկիմոս ունենալ, իսկ յեթե նա ցանկանալը, մենք հետո նրան հետներս Յեվրոպա կտանեյինք: Իսկ Մաննին պետք ե ասել, մենք նրան սրտանց սիրում եյինք:

— Իսկ յերբ ե դնալու կաբլունան:  
— Յերբ կվերջանա ձմեռը և կանցնի ամառը, հետո նորից կզա ու կվերջանա ձմեռը:

Մաննին բռնեց իր բութ մատն ու ասաց՝  
— Այսոր իկիակպարի յե (մարտ ամիսն ե, արել բարձրանում ե): Հետո բռնեց ցուցամատը՝ ավոնարի (ապրիլ, յերբ փոկը ձագեր ե բերում), հետո՝ նետտկալերվի (մայիս ամիսը, յերբ փոքրիկ փոկերը մտնում են ջուրը), կավարուկի (հունիս)...



Մաննին մատներով մեկ-մեկ հաշվում եւ Զեռքի մատները չեն հերիքում, նա դիմում ե վոտի մատների ոգնությանը: Նա ուզում է իմանալ, կաբլունան դեռ վորքան ժամանակ պիտի մնա իրենց մոտ:

— Դեռ ինչքան ժա-

մանակ կա: Շատ անգամ կկարողանաք կայակով վորսի գնալ:

— Իսկ կայակով վորսի գնալու ժամանակը շուտով կգտ, Մաննի:

— Յերբ արեգակը շատ բարձր կլինի և սառուցը կհալչի:

— Այժմ իմ հերթն յեկավ ասելու տիրությամբ՝

— Դեռ ինչքան ժամանակ կա...

Բայց ժամանակն արագ անցնում եր, արեգակը գնալով ավելի յեր բարձրանում զեպի վեր: Վերջապես հասավ այն որը, յերբ կարելի յեր վորսի գնալ կայակով:

Այդորը կյանքը յեռում եր եսկիմոսների բնակատեղիում լուսաբացից շատ առաջ: Եսկիմոսները գուրու եյին սողում խրձիթներից և դուրս քաշում կայակները, նայում եյին յերկնքին իմանալու համար, թե ինչպիսի յեղանակ ել լինելու:

Յես խոր քնած եյի իմ քնապարկում, յերբ Մաննին ինձ զարթեցրեց:

— Վեր կաց, կաբլունա, կայակները պետք ե տանենք մինչև ծովափը:

Ատիկլեռուբայի խրձիթում դտնվեց ինձ համար մի հին, բայց ամուր կայակ: Նալունիան նրա վրա նոր մորթի եր բաշել և յես ել պատրաստ եյի նավակով գնալու Մաննիի կողքից:

Ծովափում արգեն շատ կայակներ կային և նրանց տերերը կանգնած եյին կողքին՝ տաք մուշտակներ հագած:

Ճանապարհ ենք ընկնում: Հանդարտ ժամա-

նակ եւ Մեծ ու փոքր ծովախորշերից դուր ենք գալիս արձակ ծովը: Յերկու ժամ անցած հասնում ենք փորսի վայրը:

Լույսը բացվում է: Ամեն կռմից յերեսում ե, ինչպես են դուրս պլծնում ջրի միջից փոկերի մեծամեծ գլուխները: Կայակները զանազան կողմ են ցրվում:

Մեզնից բավական մոտ յերեաց ջրի վրա մի փոկ: Մաննին տեղից բարձրացավ, զա լավ վորս եր: Հետո կայակին կպած նա այնպես եր թիավարում, վոր թիյերի ձայնը ամեննին չեր լսվում: Յես ել աշխատում եյի հետեւ նրա որինակին, և մենք սահում եյինք ջրի վրայով բոլորովին անձայն:

Բայց և այնպես փոկը մեկ նկատեց և մի ակնթարթում խորասուզվեց ջրի մեջ:

Մաննին բարկությունից թիակները վար դրեց: Այժմ պետք եր սպասել, վոր փոկը նորից յերևա ջրի յերեսին:

Մենք յերկար չսպասեցինք: Մի քանի ըստեցից հետո փոկի գլուխը նորից յերեաց ջրի յերեսին: Հանդարտ եր ծովը և շատ դուր եր գալիս տաք արեգակը: Փոկը ամեննին չեր կասկածում, վոր թշնամին շատ մոտ ե իրեն: Նա խայտում ու խաղում եր ջրի մեջ և հետ ու առաջ ճոճվում: Կայակը կամաց կամաց մոտենում եր փոկին:

Ժամանակն եր հարպունը նետելու: Մաննին տեղից քիչ բարձրացավ, ստուգեց զենքը սարքին ե թե վոչ և մի-յերկու անգամ ուժգին թիավարեց...

Մի վարկյան և և շեշտակի նետած հարպունը խրվեց փոկի մարմնի մեջ... Բայց փոկը թիավահարեց պոչը և հանգիստ կերպով սուզվեց ջրի տակը:

Մաննիի սերտը բոլորովին կոտրվեց, վոր վորսը ձեռքից բաց թողեց:

Յես վորքան կարող եյի, հանգստացնում եյի նրան:


— Դարտ մի անի, Մաննի: Փոկը ելի կերև ջրի յերեսին:

— Իհարկե կերևա:

Յեվ Մաննին նորից սկսեց ուրախանալ, ծիծաղեր: Եսկիմոս վորսորդը սովոր ե սպասելու: Նա ավելի հարմար տեղափորվեց նոտած տեղում և մենք յուրկուսով յերկար ժամանակ անխռոս նստած դիտում եյինք մեր չորս կողմը:


Հանկարծ նկատեցինք մեզնից վոչ շատ հեռու սառուցի վրա նստած մի անագին ծովացուկ, վոր մոտ հինգ մետր յերկարություն կունենար: Նրա մորթը փայլում եր արեգակի տակ, իսկ չարադրուշակ ժամնիքները կախ եյին ընկած ներքի:

Մաննին ցնցվեց:



— Ծովացնւը, կաբլունա...  
 — Այո, Մաննի:  
 Մաննին շատ հուզզված եր յերեսում:  
 — Ի՞նչ կասես, կաբլունա, հարձակվե՞նք  
 թե վոչ:

Մաննին գիտեր, վոր ծովացու վորսալը  
 վտանգավոր բան ե: Կարելի յե մոաերքում ելի  
 ծովացուկեր լինեն, այն ժամանակ նրանք բոլորը  
 հարձակվեն մեր կայտկի վրա:



— Ի՞նչ ես կարծում, հարձակվե՞նք թե վոչ:  
 Մաննին վախկու չեր: Նա մեծ ցանկություն  
 ուներ հարձակվելու ծովացուկի վրա: Մեր տե-  
 սածը մի հրաշալի մեծ ծովացու եր:

Նա մի բռպեցի չափ տատանվեց, հետո նշան  
 բռնեց ու տեղը նետեց ծովացուկի վրա:  
 Բայց յերեսում եր Մաննին վերջին անգամ  
 լավ չեր աղոթել իր աստվածներէն, վորովհետեւ  
 տեղը միայն քերծել եր ծովացուկի կաշին առանց  
 մնաս հասցնելու նրան և ծովացուլը անհայտա-  
 ցավ ծովի մեջ:

Մաննին այլայլված դարձավ դեպի ինձ ու  
 ասաց՝

— Ելի վրիպեցի, ինչպես անհաջող ե գնում  
 մեր այսորվա վորսար...

Յես ել եյի ինձ վատ զգում: Եսկիմոսների  
 վորսորդական հույզը ինձ ել եր վարակել: Բայց  
 այն, ինչ վոր հետո պատահեց, յես ամեննեին  
 չեյի սպասում:


Մաննին տխուր ու արտում նստած եր կա-  
 յակում: Նրան շատ եր վշտացրել անհաջողու-  
 թյունը: Վոչինչ չեր կարողացել վորսալ... և ես-  
 կիմոսները կարող են կարծել, վոր նա վախկու  
 և անշնորհք վորսորդ ե:

— Զե, Մաննի, դու դըս մասին ամեննեին մի  
 մտածի: Բոլորը լավ հիշելիս կլինեն, ինչպես դու  
 ձեմեռը ձեռքից բաց չթողեցիր ահագին փոկին և  
 սպանեցիր...

Խոսք չվերջացրի: Ի՞նչ պատահեց, վոր Ման-  
 նին հանկարծ ճշաց ու յերկու ձեռքով վոտքը  
 բռնեց: Յես վախեցած մոտեցա նրան:

— Ինչ ե պատահել, Մաննի:

— Վայ վոտս, վայ վոտս: Այդ ծովացուլը...  
 ոգնեցեք:



Յեվ հենց նույն վարկյանին տեսա, ծովացուլի յերկար ժանիքը ծակել եր կայակը, մտել եր Մաննիի ազգի մեջ և մյուս կողմից դուրս յեկել. Խորածանկ կենդանին տակից եր հարձակվել կայակի վրա.

Յես պետք ե ազատեցի Մաննին ծովացուլից, բայց չգիտեյի ինչպես. Յես գրկեցի նրան մի ձեռքով և ուզում եյի տեղիցը շարժել, իսկ մյուս ձեռքով բարձրացնում վիրավոր վոտր. Ամեն մի շարժում անտանելի ցավ եր պատճառում նրան, բայց նա լուռ եր և ողանում եր իրեն քաջի պես, ինքն ել աշխատելով ողնել ինձ ու բարձրացնել ժանիքով ծակված վոտր.

Հանկարծ, Մաննիի ձեռքը պինդ սեղմեց իմ ուսը: Նա ավելի ես սպրզնեց և նորից ծովաց: Նայեցի նրա վոտին և տեսա, վոր ծովացուլի ժանիքը շարժում ե նրա վերքի մեջ: Պարզ եր, վոր ծովացուն ուզում եր հանել ատամը վերքից:

— Մաննի, սիրելիս, մի քիչ համբերի, իսկույն կազմակեր:

Յեվ իսկապես, մի ուժեղ շարժում անելուց հետո Մաննին ազատվեց սարսափելի ժանիքից: Վերքից արյուն հոսեց և Մաննին ուժասպառ

ընկապ կայակի մեջ: Հենց այդ ըովեյին ծովացուլի գլուխը յերևաց ծովի յերեսին:

Պետք ե կրակել:

Վերցրի հրացանս և արձակեցի: Յերբ ծուխն անցավ, տեսա, ինչպես ծովացուլի գլուխը թույլ ու անզոր սուզվում ե արնախառն ջրի մեջ:

Վտանգն անցավ, այժմ պետք եր Մաննիի մասին մտածել:

Յերբ յետ նայեցի, տեսա Մաննին բարձրացել նայում ե ծովացուլին: Յեվ հանկարծ վորքան ույժ ուներ հավաքեց ու նետեց տեղը ծովացուլի վրա:

— Կաբլունա, պարանը... պարանը բռնի:

Բայց պարանը բռնելու կարիք չկար, Մաննին դարձյալ վրխակել եր: Ծովացուլի գլուխն անհայտացավ ջրի մեջ...

Յես մինչև անգամ ուրախ եյի, վոր այդպես յեղափ, վորովհետև ծովացուլը սաստիկ մեծ եր մեր փոքրիկ կայակների համար:

Բայց Մաննին բարձր և աղիողորմ լաց յեղափ:

— Ինչո՞ւ յես լաց լինում, Մաննի: Զե վոր մենք յերկուսով չպիտի կարողանայինք ծովացուլին քաշելով հետներս տանել: Մենք ափից շատ հեռու յենք, իսկ կայակն ել ծակվել ե, մեջը ջուր և լցվում:

— Ախ, կաբլունա, կաբլունա, մարդ ել այդպիսի վորսը բաց կթողնի ձեռքից:

Յեվ Մաննին ավելի բարձր սկսեց լար:

Յես զարմացած սկսեցի կապել նրա վոտք վերքը: Տխուր մտքեր եյին պաշարել ինձ: Մաննիի

կայակը լցվում եր ջրով, կարող եր սուզվել: Ման-  
նին թուլացել եր արյունհոսությունից և անկա-  
րող կիներ լող տալ: Իսկ յերկնքում կուտակվում  
եյին սև ամպեր և քամի յեր բարձրանում:

Ի՞նչպես պետք ե մենք ափը հասնենք:

Մեր կայակը շատ դանդաղ սահում եր ալիք-  
ների վրայով, կայակի մեջ լցող ջուրը մենք  
չելինք կարողանում ամբողջապես դուրս թափել:  
Մեկ ել նկատեցի, վոր կայակի առջևի մասը կպ-  
մաց կամաց սուզվում ե ջրի մեջ: Իսկ յես վոչ-  
ինչ չունեյի, վորով կարողանայի կայակի ծակը  
փակել:

Հանկարծ լսեցի Մաննիի ձայնը՝

— Կարլունա, տես, կայակներ են յերեսում:

Նայեցի դեպի հարավ, հիբավի հորիզոնի վրա  
մի սև բիծ եր յերեսում: Մաննիի սրատես աչքերը  
իսկույն վորոշեցին, վոր այդ սև բիծը եսկիմոսի  
կայակ ե:

Չեռքերս՝ բերնիս մոտ բանած վորքան ույժ  
ունեյի գոռացի.

— Այստեղ, ոդ-  
նեցեք:

Մեր ականջին հա-  
սավ նրանց պատաս-  
խանի ձայնը, մեր  
ձայնը լսել եյին:

Յերկու կայակ  
շտապ մոտենում եյին  
դեպի մեզ ոգնություն  
հասցնելու: Մեկի մեջ



նստած եր Տոբիասը՝ մի խոշոր և ուժեղ տղա:  
մարդ, մյուսի մեջ՝ Ուկուն՝ իմ լավ բարեկամը-  
Մի քանի բռպեյից հետո նրանք մոտեցան մեզ:

Մի կտոր կաշիով ծակը մի կերպ փակեցին  
և Մաննիի կայակը բռւկսիրի վերցրին: Վտանգը  
համարում եյինք անցած:

Միթե մենք փրկված ենք, Ուշադրությամբ  
նայեցի Մաննիին: Նա ուժասպառ կիսապառկած  
եր կայակի խորքում: Նրա աչքերից արտասուր  
եր հոսում ցավից ու վշտից: Յեվ դա հասկանալի  
յեր: Տոբիասը իր կայակին կապած տանում եր  
մի ահազին փոկը իսկ ինքը, Մաննին, վոր արջ  
եր սպանել, այսոր տուն ե վերադառնում դա-  
տարկածեռն:

Բայց Մաննիի վիշտը չեր ինձ անհանգստաց-  
նողը: Ինձ անհամեմատ ավելի յեր անհանգստաց-  
նում նրա վոտի վերքը: Նկատեցի, վոր նրա վոտի  
կապը արյունոտած ե, նշանակում ե արյունոս-  
ությունը չի դադարել: Մնացել եր մոտս մի կտոր  
փիրակապ և մի թաշկինակ, յես մի կերպ ամ-  
րացրի նրա վերքի կապը: Բայց սիրտս շատ ան-  
հանգիստ եր: Մտածում եյի, թե յերբ պետք ե  
տուն հասնենք:

Իսկ յեղանակը քանի գնում վատանում եր և  
քամին սաստկանում:

Տոբիասը յերկյուղով նայեց յերկնքին ու  
ասաց՝

— Փոթորիկ կինի:

— Վայ մեզ, — ավելացրեց Ուկուն, — սար-  
սափելի յե լինում հարավից յեկած փոթորիկը:



Յես ել զիտեյի այդ:  
Քանի քանի անգամ ե պատա-  
հեր վոր յես ընկել եմ հարա-  
վից յեկած փոթորիկի մեջ,  
վոր վրա յե հասնում հան-  
կարծակի և սաստիկ ալեկո-  
ծում ե ծովը: Բայց ուրիշ  
բան ե, յերբ գտնվում ես  
լավ սարքավորված նախում

և, ուրիշ բան՝ յերբ նստած ես լինում խախուտ  
ու փոքրիկ կայակում:

Միայն թե շուտով ցամաք հասնենք: Եսկի-  
մոսները զոռ են տալիս թիյերին և կայակները  
թեթև ու արագ սահում են ջրի վրայով: Ճանա-  
պարհին մեզ միանում են ելի մի քանի կայակ-  
ներ, աշխատում են բոլորը միասին լինել:

Մենք արագությամբ առաջ եյնք թռչում:  
Իսկ մեր յետեկց լսվում եր մի ինչ վոր աղմուկ,  
դա վրա հասնող փոթորիկի ձայնն եր: Ալիքները  
բարձրանում, մինչև յերկինք եյն հասնում: Դրանք  
ալիքներ չեյին, այլ ջրի ահագին սարեր: Այնքան  
շատ եյին ջրի ցելթուքները, վոր վոչինչ չեյինք  
տեսնում: Գիտեյինք միայն, վոր դեռ ցամաքը  
շատ հեռու յե...

Հանկարծ իմ հարեան Ուկուն թիյերը արագ  
կօխեց զայիշների մեջ և ինքը ամբողջ մարմնով  
թեքվեց դեպի առաջ: Հաղիվ յես ել կարողացա  
նույն անել, վոր ջրի մի ահագին սար ըն-  
կավ մեզ վրա: Մի վարկյան՝ և ամեն բան ան-  
հայտացավ:

Ալիքն անցավ: Բայց վհրտեղ ե Տորիասը, վոր  
նավում եր մեր կողքից: Մենք աչքներս հառած  
նայում ենք մթության մեջ:

Յեվ ինչ ենք տեսնում: Նրա կայակը շուռ ե  
յեկել և ուղղահայաց դիրք ե ընդունել՝ այդ փոկն  
ե քաշում նրան դեպի վար: Ահա յերեսում են Տո-  
րիասի գլուխն ու ձեռքերը: Նա բռնել ե Ման-  
նիին, վորի կայակը նույնպես շուռ ե յեկել և  
վորը անկարող ե լող տալ:

Յես առնում եմ նրա ձեռքից Մաննին: Ուկուն  
և Տորիասը ուղղում են կայակը և Տորիասը նստում  
է նրա մեջ: Հետո կայակի մեջ ե տեղավորվում  
ե նաև Մաննին:

Ալիքները մեկը մյուսի հետեկց գալիս են մեզ  
վրա: Յերկու անգամ շուռ ե գալիս Պոյյետիի  
կայակը, մեկ անգամ Ալեխնանի կայակը: Սո-  
դյոք շուտով կհասնենք ցամաքին և ափ գուրս  
կգանք արդյոք վող և առողջ:

Վերջապես հասնանք ցամաքին: Յեվ չկորավ  
վոչ մի կայակ ու չխեղդվեց վոչ մի եսկիմոս:  
Անհավատալի եր թվում ինձ այդ:

Մաննին դողում եր, նա տեսնդ ուներ:

— Շատ ե վոտդ ցավում, Մաննի:

Նա վոչինչ չպատասխանեց: Նրա գլուխը կախ  
եր ընկնում կրծքի վրա, վոտները դողում եյին.  
Յես ու Ատիկերան մի կերպ նրան տուն հաս-  
ցրինք: Ահա վերջապես մենք տաք խրճիթունն  
ենք...


Մաննիին պառկեցրինք գահույքի վրա, չոր  
որբեցինք ու ծածկեցինք մուշտակներով: Յես նո-

բից կապեցի նրա վերքը: Առաջին վիրակապը բուրովին թրջված եր ու արյունաթաթախ: Յերկու վերքերի շուրջը կաշին բորբոքված եր, բայց արյունահոսությունը դադարել եր:

Դիշերը Մաննին սկսեց զառանցել: Տեսդը սաստկացավ: Յես համարյա չքնեցի, շարունակ նստած եյի նրա կողքին: Այդ խեղճ տղան ինձ համար հարազատ եր դարձել:

Սկսեցին ծանր, յերկար ու անհանգիստ որեր: Յերկու շաբաթ շարունակ Մաննին կռվում եր մանի գեմ և այդ ամբողջ ժամանակը յես անց կացրի Մաննիի կողքին: Յերբեմն միայն գնում եյի նավը ուտելիք և գեղորայք բերելու:

Բայց Մաննին ջահել եր և ուժեղ: Բայց այդ նա եսկիմոս եր, իսկ եսկիմոսները դիմացկուն մարզիկ են: Հենց վոր Մաննին լավ զգաց իրեն, նա արագությամբ սկսեց կազդուրվել: Շուտով նա կարողացավ ման գալ, ճշմարիտ ե, մի քիչ կաղալով: Յեվ հետո ելի սկսեց յերազել վոր սորդության մասին:



### VIII. ԱՄԱՆՑ ԵՍԿԻՄՈՍՆԵՐԻ ԲՆԱԿԱՏԵՂԻՈՒՄ

Հուլիս ամիսն եր, ամենալավ ժամանակն այդ վայրում: Դուքս յեկան եսկիմոսները իրենց ձմեռվա ձյունե խըճիթներից: Այժմ ամառ ե, նրանք աղբում են վրանների տակ: Վրաններ են խփված ամեն տեղ՝ բլուրների վրա և գետակի ափին: Գետում լողում են մեծ ու գեր կարմրախայտներ:

Ատիկելեռան խփել եր իր վրանը մի բարձր ժայռի վրա, վորտեղից լավ կարելի յեր տեսնել մոտեցող յեղերուներին: Շատ լավ եր նրա վրանը: Նա կարված եր փոկի բարակ ու լավ պահպանված կաշիներից, վորոնք ամրացված եյին փայտե յերեք ձողերի վրա: Իսկ վօրպեսզի վրանը կպած լինի գետնին, Մաննին ու իր յեղբայրները

մեծ-մեծ քարեր եյին բերելու շարել վրանի տակ  
փռած գորդի չորս կողմը:

Վրանի ներսը շատ մաքուր, եր: Գետնին՝  
փոված եյին յեղջերվի մորթիներ, մուտքի մոտ  
գրված եյին յերկու քար, վորոնց արանքում կրակ  
եյին անում: Այդ նրանց ոջախն եր:

Յերեկոյեց: Մաննին վերապարձել ե ծովափից,  
վորտեղ գնացել եր ձուկ վորսալու: Նրա մեջ-  
քին կապած եր փոկի կաշուց կարած մի պայու-  
սակ, վորի մեջ նա ձկներ ե լցրել, իսկ ձեռ-  
քում բռնած ուներ ձկնորսական գործիք յեր-  
կաթե սուր ծայրով և յերեք մետր յերկարու-  
թյամբ:

Ես դիմավորում եմ նրան:

— Բարե, Մաննի:

— Մանի-տկումի:

Մաննին գործիքը գրեց մի անկյուն, իսկ  
ձկներով լիքը պայուսակը ձգեց մոր առաջ:

Նրա փոքր յեղբայր Աննին անչափ ուրախ ե,  
նա հիմա պիտի ստանա ձկան հում աչքերը, վոր  
հսկիմոս յերեխաների ամենասիրած անուշեղենն ե:  
Նա թուշկուում ե մոր շուրջը, փաթաթվում ե  
նրան, յերբ մայրը ջոկջոկում ե ձկները, իսկ  
աչքերը ստանալուց հետո վրանից անմիջապես  
դուրս ե վազում: Նա վախենում ե, վոր Մաննին  
կամ մյուս յեղբայր Երբերան ձկան աչքերը իր  
ձեռքից չխլեն: Ախար դա այնքան համեղ բան  
ե, վոր նա հոժարակամ վոչ վորի չի տա:

Նալունիան խնամքով կտոր-կտոր ե անում մի  
ձուկ: Մաննին, Երբերան և Ատիկլեռան ստա-

նում են այդ հիանալի ձկնից մեկական կտոր:  
Մի կտոր ել ինձ ե առաջարկում, բայց յես քա-  
ղաքավարի կերպով հրաժարվում եմ:

Մաննին աշխատում ե ոջախի մոտ, կրակ  
ե ուզում անել: Նա քարի վրա դրեց մի կտոր  
տախտակ՝ մեջը փոս, իսկ փոսի մեջ մտցրեց կլոր  
փայտ՝ վրան յեղջերույի ջերեց շինած թել փա-



թաթած: Հետո գրեց կրծքին յեղջերուի վոսկո-  
րից մինած՝ մեջտեղը ծակ, կլոր փայտի մյուս  
ծայրը անց կացրեց այդ ծակի մեջ, այսուհետեւ  
թելը մեկ և մյուս կողմը ձգելով, արագությամբ  
պտտեցնում եր փայտը աջ ու ձախ: Մոտ կես  
ժամ անցնելուց հետո փայտերի միմյանց շփվե-  
լուց առաջ յեկավ կլոր փայտի ծայրին ծխացող  
փայտե վոշի: Այդ վոշին նա ածեց յուղոտած  
մամուռ պարունակող տոպրակի մեջ, մամուռը  
բոցավառվեց և կրակը պատրաստ եր:

Փոքրիկ Աննին նայեց վրանի ներսն ու աղա-  
ղակեց՝

— Կրակ, կրակ, — ու նորից անհայտացավ:  
Հեռվից լսվում է նրա ձայնը՝

— Կրակ, կրակ, Մաննին կրակ է արել,

Մեկը մյուսի յետեից գալիս եյին հարևան-  
ները: Բոլորն ել ուզում են կրակից բաժին ստա-  
նալ: Ատիկլեռան մեծ լրջությամբ բոլորին թույլ  
եր տալիս վառեն իրենց ճրագները իր ոջախից:



Իսկ Նարունիան այդ ժամանակ ձուկը դար-  
սեց պտուկի մեջ և զրեց կրակի վրա, վոր յեփի:  
Նա ընթրիք եր պատրաստում: Բայց վոչ վոք  
չսպասեց, վոր ձուկը յեփի, և ինչ կարիք կար:  
Հում, բայց մի քիչ կրակի վրա տաքացրած ձուկն  
ել շատ համեղ է: Հենց վոր ձուկը մի քիչ տա-  
քացավ, ամբողջ ընտանիքը նստեց ընթրիք անե-  
լու: Բոլորը միմյանց հետեւից ձեռքները կոխում  
եյին պտուկի մեջ և հանում տաք, բայց անեփ

ձուկը: Նրանց յերեսներից ու ձեռներից հոսում  
եր ձկան յուղը, յերեխաները լիզում են այդ  
յուղը: Իսկ յերբ կերան կշացան, վրան սառը  
ջուր խմեցին:

\* \* \*

— Ա-ա-ա-ու-ու-ո-ո-ա-ա...

Ընթրիքից հետո մի քիչ ժամանակ քունս տարել  
եր, այժմ զարթնում եմ, աչքերս տրոլում ու  
նայում չորս կողմու:

Ո՞վ է արդյոք այդ տխուր ու միատեսակ ձայ-  
ներ հանողը:


Դուրս յեկավ, վոր Մաննին եւ նա նորոգում  
եր իր ձկնորսական գործիքը և հետը «յերգում»:  
Ատիկլեռան ել եր յերգում և գլուխը կախ  
քցած աշխատում: Նալունիան աշխատում եր լուռ  
և նորոգում մի կայակ: Անշուշտնա ել եր ուզում  
յերգել, բայց նա վախենում եր խանգարի տղա-  
մարդկանցը:

Մաննի, արի գնանք զբունելու:

Մաննին մի կողմ զրեց աշխատանքը և վոտքի  
յեկավ: Նրա յերեսին նշմարվեց ուրախ ժպիտ:  
Ուրախ եր վոր զբունելու պիտի գնա կարլու-  
նայի հետ:

Գնում ենք: Տաք և պայծառ յերեկո յե, մեր  
չորս կողմն եսկիմոսների վրաններն են: Մենք  
վճռեցինք հյուր գնալ մեկի մոտ:

— Ում մոտ գնանք, Մաննի: Կուզես գնանք  
կատակակ-կեայի մոտ:



ված ե մաշված ու ծակծկված կաշիներից։ Յեղբ  
ել գնաս կա-աակ-կեայի մոտ, նրան միշտ կտեսնես  
ընած մուշտակե վերմակների կույտի վրա։ Իսկ  
վրանի մուտքի մոտ անչափ ճանձեր կան, վորոնք  
ահազին բազմությամբ նստած են լինում այդ-  
տեղ թափված ձկան վոսկրների վրա։ Վրանի  
ներսում այնպիսի կեղառություն ու գարշա-  
հոտություն ե տիրում, վոր մարդու շունչ ե  
կտրվում։

— Ուղիղ ես ասում, չարժի գնալ կատ-աակ-  
կեայի մոտ։

— Կուզես, գնանք Ուլիկտուալլայի մոտ, —  
առաջարկեց Մաննին։

— Այժմ յես եմ յերեսս ծոռւմ։ Ուլիկտուալ-  
լան անսոր ե և լավ ձկնորս ե։ Նրա յերեխա-  
ները, մինչև աճուամ 5 — 6 տարեկանները, կար-  
թով ձուկ են վորսում, իսկ չափահամները շատ  
կարմրախայտ են վորսում։ Բայց նրա ամբողջ  
վրանից ձկան հոտ ե գալիս։ Նրա տան իրերը

Մաննին դեմքը  
ծոռւմ ե և գլուխը  
բացասաբար շար-  
ժում, կատ-աակ-  
կեան ծույլ ե,  
վատ վորսորդ ե  
և աղքատ։ Նրա  
վրանը ամեննեին  
նման չի Ստիկ-  
լեուրայի գեղե-  
ցիկ վրանին, կար-

այնքան յուղոտ են և ամեն բանից այնպես ձկան  
հոտ ե գալիս, վոր մարդ զզվում ե։  
— Գիտե՞ս ինչ, Մաննի, արի գնանք Պոյյետիի  
մոտ։

Պոյյետին Ատիկլեուրայի յեղբայրն եր։ Պոյ-  
յետին ամուսնացած եր։ Նրա կինը՝ Կաբլոկան  
մի հեզ, խոնարհ ու բարեհոգի անձնավորություն  
եր։ Նա ուներ մի փոքրիկ տղա, վոր հազիվ մի  
քանի ամսական լիներ։



Կաբլոկան մեզ վոր տեսավ, ծափ տվեց։ Մենք  
շատ մոտ եյինք նրա հետ։ Նա նոր եր «լողացրել  
յերեխային», այսինքն կատվիպես լիզել եր նրա  
մերկ մարմինը։

Յերբ կարլոկան մոտեցավ դեպի մեզ, յերեխան լաց յեղափ. Նա նորից մոտեցավ յերեխային և «ծծակ» դրեց նրա բերանը. Այդ ծծակը մի կտոր ճարպ եր, վորի միջով փայտ եր անց կացրած: Այդ փայտը յերկարությամբ ընկնելով յերեխայի բերանի վրա, թույլ չեր տալիս վոր նա ճարպը կուլ տա: Յերեխան հանգիստ պարկած ծծում եր այդ ճարպը:

Բայց վորքան ծիծաղելի յեր, յերբ կարլոկան ջուր եր խմացնում իր յերեխային: Նա լցնում եր բերանը ջրով, կռանում եր յերեխայի վրա և զգուշությամբ ջուրը իր բերանից լցնում եր յերեխայի բերանը:

Այդ յերեկո Պոյյետին տանը չեր, նա վորսի եր գնացել:

Մենք մի քիչ նստեցինք կարլոկայի մոտ և ուզում եյինք արդեն հեռանալ, յերբ վրանը մտավ Պոյյետին:

#### Մանիկտումի:

Նա բարեում եր մեզ: Իսկ դառնալով կարլոկային, նա անխոս գցեց նրա առաջ բերած վորսը՝ սպանված թուշունները և մեկնեց իր վոտները թաց ու կեղառոտ կոշիկներով, վորոնք կարված եյին փոկի կաշուց:

Կարլոկան ատամներով բռնեց ու հանեց նրա կոշիկները և դրանից նրա բերանը լցվեց ցեխով:

Լավ կին եր այդ փոքրիկ կարլոկան: Մեկ անգամ ձմեռը, յերբ պետք ե գնայի մերոնց մոտ, նա ինձ ուղեկցեց մինչև նավը: 50 աստիճան ցուրտ եր: Կարլոկան իր մեջքին պարկի մեջ

կրում եր յերեխային, վոր բոլորովին մերկ եր: Յերբեմն նա հանում եր յերեխային պարկից և յերեխան մի քանի ըոպե մերկամարմին մնում եր ցրտում: Սակայն այդ կարլոկային վոչ մի հոգս չեր պատճառում: Եսկիմոսների յերեխաները սովոր են ցրտին:

Արգեն ուշ եր, յերբ մենք դուրս յեկանք Պոյյետիի վրանից: Յես շատ եյի ուզում այցելել նաև ծերունի Ալեխնդանին՝ Ատիկլեռայի հորը: Նա 70 տարեկան մի փառահեղ ծերունի յեր՝ յերկար մորուքով և ձյունի պես սպիտակ մազերով: Նա եսկիմոսների մեջ ամենից մեծն եր և մեծ համբավ ուներ իր ցեղակիցների մեջ: Նրա մասին պատմում եյին, վորպես թե նա ջանել ժամանակ մեծ քաջագործություններ ե կատարել՝ հաղթել և «տունգիների» հսկա ցեղին, վորն առաջ ապրելիս ե յեղել այս կողմերում:


Բացի այդ Ալեխնդանը իր մասին պատմելիս ե յեղել, վորպես թե ինքը յեղել ե լուսնի վրա: Ասել ե, թե լուսնի վրա հրաշալի տեղեր կան և յերեք այնտեղ սով չի լինում, վորովինետև այնտեղի անսահման հարթավայրերում բազմաթիվ յեղջերուներ կան: Ով վոր այս աշխարհում առանց դիմագրության կատարի Ալեխնդանի բոլոր պատվերները, նա մահից հետո կլինի լուսնի վրա:

Շատ անգամ ե պատահել, վոր յես նստած

եմ յեղել Ալեխնգանի խրճիթում նրա և նրա կնոջ Անտանայի կողքին, վոր մի պառավ կին եր մանրու մաշված ատամներով, փողձել եմ խոսեցնել «սպիտակահեր» ծերունուն, վոր նա պատմի իր կատարած քաջագործությունների մասին։ Բայց զուր ե անցել իմ աշխատանքը, «կաբլունայի» ներկայությամբ Ալեխնգանը լուռ եր մնում։ Այդ խորամանկ ծերունին բավականաչափ խելացի յեր և հասկանում եր, վոր իր պատմություններով կարող ե խաբել միայն դյուրահավատ եսկիմուներին։

Այգպես յեղավ և այս անգամ։ Ալեխնգանը վողջունեց մեզ գլխի վեհապանծ շարժումով և մի կողմ քաշվեց, վոր տեղ տա մեզ նստելու իր կողքին գահույքի վրա։ Բայց մեզ հետ խոսելու վոչ մի ցանկություն չեր ցույց տալիս, այլ նայում եր մեզ վրա իր խելոք ու թափանցիկ աչքերով։ Մենք քիչ ժամանակ նստեցինք նրա մոտ մի քանի անկապ խոսքեր ասացինք միմյանց ու հեռացանք։

Մենք այլևս հյուր գնալու ցանկություն չունեյինք և վերադարձանք տուն քնելու։



## IX. ՄԱՆՆԻՆ ԿԱԲԼՈՒՆԱ ՅԵ ԴԱՌՆՈՒՄ

— Կուգես, Մաննի, գնալ մեզ հետ կաբլունանունի։

— Շատ, շատ կուգեյի։ Ուղիղ ե չե, վոր ձեր կողմերում ել յեղջերուներ են վորսում։

— Այո, վորսում են, Մաննի։

— Կնշանակի Մաննին վորսի կդնա կաբլունանունիում։ Դու ասացիր, վոր ինձ մի հրաշան կնվիրես, ուղիղ եյիր ասում։

— Իհարկե կնվիրեմ, պատրոններ ել կտամ հետք։

Մաննին շատ ուրախ ե։ Նա իրեն կիսով չափ արդեն կաբլունա յե համարում։ Յերեսում ե, վոր նա շատ ե ուզում։ շուտով մեզ մոտ նավը տեղափոխվել։

Սակայն մեջտեղում Ատիկեռուրան կար, նա այնքան ել գո՞չ չեր, վոր Մաննին նրա ձեռքից առնում ենք, մեզ մոտ ենք բերում։ Մաննին լավ վորսորդ եր, նա տանն ել շատ պետք կդար։

— Ասենք, — ավելացրեց նա, — յես թույլ

կտամ Մաննիին ձեզ մոտ գա, յեթե կարլունա-  
ների փոխարեն ինձ մի լավ բան տան:

— Իսկ դու ի՞նչ կուզեյիր, Ատիկլեռը:

Ատիկլեռը դժվարանում եր ասել, թե ի՞նչ  
կուզեր: Կարլունայի մոտ այնքան լավ-լավ բա-  
ներ կան փոր... մարդ չի իմանում, փորն ուզի:

— Վերցըն այս ծալովի դանակը, դուրդ  
գալի՞ս ե,

— Շատ լավ բան ե, շատ եմ հավանում:

Ատիկլեռը քեֆը տեղն եկավ, բայց ելի  
դեռ գոհ չեր:

— Զե, Մաննին ավելի արժի:

Իհարկե Մաննին ավելի արժեր, բայց չգիտե-  
յինք, ուրիշ ել ի՞նչ առաջարկեյինք Ատիկլեռ-  
ը յին:

Աչքերս ման ածեցի նավի ներքնահարկում,  
վոր եսկիմոսի համար մի հարմար բան գտնեմ և  
հանկարծ աչքովս ընկավ մի իին խարտոց:

— Ատիկլեռը, կուզես այս ել տամ քեզ:

Ատիկլեռը անչափ ուրախացավ: Նա գոհ  
սրտով տուն վերադարձավ, ստանալով մի խար-  
տոց ու մի գանակ Մաննիի փոխարեն... Ման-  
նիին թույլ տվեցին տեղափոխի նավը:

Հետեյալ որը յեկավ նա, վազեվագ ու հևալով  
բարձրացավ նավի տախտակամածը և շվարծ  
տեղումը մնաց կանգնած:

Մենք ուշախ սրտով վողջունեցինք նրան:

— Այ... յես յեկա:

— Բարով ես յեկել Մաննի, դու հիմա  
մերն ես:

Մաննին ժպտում եր ուրախ ու մի քիչ չհա-  
վատալով:

Յես մոտեցա նրան ու բռնեցի նրա ձեռքը:  
— Կարլունան պետք ե լողանա, Մաննի: Հետո  
նրան նոր շորեր կտան:

Մաննին ուրախությունից ծափ զարկեց: Նոր  
շորեր, ի՞նչ լավ բան ե...

Նա գեղեցիկ մազեր ուներ, բայց գլուխը սաս-  
տիկ վոշոտ եր: Ափսոսում  
եյինք նրա մազերը խուզել  
այդ պատճառով լողանալուց  
հետո նրա զուխը լավ սան-  
րեցինք և մազերի մեջ փոշի  
ցանեցինք:

Նավաստին բերեց նրա  
համար նեքնաշապիկ ու վար-  
տիք: Մաննին սկսեց հագնվեր:

Այդ ժամանակ յես տախ-  
տակամածում նստած կար-  
դում եյիս Մեկ ել տեսա  
Մաննին միայն շապկով ու  
վարտիքով զալիս ե դեպի  
ինձ ու հապարտ-հապարտ այս  
ու այն կողմն ե նայում:

— Մաննի, այդ ուր ես  
գնում:

— Քո մոտ, կարլունա,  
յես արդեն պատրաստ եմ:

— Բայց դու դեռ հագ-  
նված չես, Մաննի:



— Ի՞նչպես թե հագնված չեմ, բա սա շոր  
մի, Այս ել ինչ լավ ե...  
Սաստիկ ծիծաղս յեկավ:

— Չե, Մաննի, կաբլունան այդ շորի վրայից  
ուրիշ շոր ել ե հագնում: Միայն այդ շորով վոչ  
վոք մարդամեջ դուրս չի գալիս:

— Ինչո՞ւ վոր:

Յես ել չգիտեյի ինչու:

— Վորովհետև ցուրտ ե, Մաննի:

— Բայց այժմ տաք ե:

Ե մի ուրիշ շոր ել հագնես: Յեվ դու միշտ այդ-  
պես արա:

— Ուրեմն ինձ ուրիշ շոր ել կտան, վորաեղ  
ե այդ շորը:

— Ներքեսում:

Յես ինքս նրան ներքե տարա: Նրան հազցնող  
նավաստին վորոնելիս ե յեղել նրան:

— Յես միայն մի ըոպեյով հեռացա այստե-  
ղից, վոր նրա վերահագուստը բերեմ, տեսա նա  
չկա, — ասաց նավաստին:

Մաննին վերջապես բոլորովին հագնված ե: Նրա  
հագուստը մի քիչ խայտաբղետ եր: Նրան հազցրել  
ելին այն շորերը, ինչ վոր ուրիշներին պետք չեր  
յեկել՝ մի գործված կապտագույն շապիկ, յեղջերվի  
մուշտակից կարած վարտիք, վոր հասնում եր  
մինչև նրա ծնկները, սպիտակ ու յերկար չու-  
քիներ, փայլուկած հին տուֆլիներ և բաց կապ-  
տագույն գլխարկ, վոր գործ ե ածվում լողանալիս:

Բայց գուցե յերբեք և զոչվոք չի հպարտա-



ցել իր նոր հագուստով այնպես, ինչպես հպարտանում եր այժմ Մաննին: Նա ուրախությունից չեր իմանում ինչ անի, մեկ ծիծաղում եր, մեկ շորերը բռնում, քաշում եր այս ու այն կողմ և շուտ-շուտ հետաքրքրությամբ ու հիացած նայում եր իր ձեռքերին ու վոտքերին: Նա փորձ եր անում իր մեջքին ել նայի, բայց այդ նրան վոչ մի կերպ չեր հաջողում:


Իսկ ինչպես եր ուտում: Նա ուտում եր, վորքան սիրտն ուզում եր, իսկ նրա սիրտը անչափ շատ եր ուզում: Յես վախենում եյի, վոր նա շատ ուտելուց հիվանդանա, բայց այդ փորձանքից նա ազատ մնաց:

Մաննին շատ շուտ սովորեց նավի կյանքին: Մեր ողերևութաբան Հանզենը նրան գրել կարդալ սովորեցրեց: Նա շատ՝ շուտով սովորեց կարդալ և ստորագրել իր անունը և մինչև անգամ ժամացույցին նայելով իմանալ ժամանակը: Բայց նրա ամենասիրած բանը դամա խաղալն եր:

Այն ել ինչպես եր տաքանում խաղալիս: Մի անգամ յես կայուտում նստած գիրը եյի կարդում, իսկ Մաննին ու լեյտենանտը մի անկյունում դամա եյին խաղում: Հանկարծ տեսիցս վեր թռա կայուտում բարձրացած վայրենի գոռում գոչումից: Դուրս յեկավ, վոր Մաննին տարել եր լեյտենանտին և ուրախությունից այդպես աղաղակ եր բարձրացրել:

Իսկ յերբ նա տարվում եր, բարձր ու աղիողորմ լաց եր լինում:

Այսպես եր անցնում Մաննիի կյանքը նավում:



\* \* \*

Անցան յերկու ամիս՝ հունիսը և հուլիսը: Իսկ ոգոստոսին «Վիճելմ արքայի հողում» յերկու ձմեռ անցկացնելուց հետո վճռել եյինք ուզերուել գեպի արևմուտք: Մաննին ել պետք ե մեզ հետ գար: Նա արդեն իսկական կարլունա յեր դարձել:

Ուղիորդեցինք: Եսկիմոսները բոլորը յեկել եյիս մեզ ճանապարհ դնելու: Շատ սրտառուչ եր մեր միմյանցից բաժանվելը:

Բայց մենք յերկար ճանապարհորդեցինք: Մեպտեմբերի սկզբին հասանք Մակենզիի գետաբերանը և փոքր ժամանակ կանգ առանք այնտեղ: Հետո յերեաց, վոր շարունակել ճանապարհը չենք կարող, վորովհետև մեզ ամեն կողմից պատել ե սառուցը: Մտիպված եյինք յերրորդ ձմեռն անցկացնել սառուցների մեջ:

Մենք բոլորս, նույնպես և Մաննին, գործ շատ ունեյինք: Մաննին շատ հեզ և փութաջան աշխատող եր, կարելի յե ասել ամենալավն եր բոլոր ծառայողների մեջ: Նա շատ շուտով սովորեց փայտ սղոցել ու կոտորել և կայուտները մաքրել: Բացի այդ նա և լավ վորսորդ եր: Յես նվիրեցի

Նրան մի կարաբին և մի վորսորդական հրացան։  
Նա շատ լավ եր պահում հրացանները և լավ վորս  
եր անում։

Բայց յես նկատեցի, վոր վերջին ժամանակ-  
ները նա շատ տխուր ե յերկում։ Գույնը դցել  
եր, նիհարել և առաջվա նման ուրախ չեր։ Նրա  
ուրախ ծիծաղը այլես ամեննին չեր լսվում։

Յես շատ եյի անհանգստանում։ Մտածում  
եյի, չինի՞ թե Մաննին հիվանդ ե։

Մի յերեկո վորսից վերադառնալուց հետո մտա-  
կայուտը։ Լսեցի, վոր մեկը բարձր լաց ե լինում։  
Զայնից իմացա, վոր լացողը Մաննին ե և շտա-  
պեցի նրա մոտ։



— Մաննի, ի՞նչ ե պատահել։ Չինի՞ քեզ մեկը  
վիրավորել ե։

Մաննին ձառքին մի պատկեր բռնած աղիողորմ  
լաց եր լինում։

— Մաննին չի գնա... կարլունանունի... ինձ  
այնտեղ կսպանեն... կսպանեն...

— Ով կսպանի, Մաննի, ի՞նչեր ես խոսում։  
Բայց Մաննին չեր հանգստանում և մեկնում  
եր դեպի ինձ ձեռքում բռնած պատկերը։

— Այ տես... տես...  
Յեվ ավելի բարձր լաց յեղափ։  
Նայեցի պատկերին, տեսա, դա մի անգլիա-  
ցու նկար ե, վոր գաղանային կերպարանքով կըտ-  
րում ե մի բուրի\* զլուխը։ Դա անգլիացիների  
ու բուրերի պատերազմի ժամանակից մնացած  
կոպիտ ու անճաշակ պատկերներից եր։

— Միամիտ կաց, Մաննի, այդ դատարկ  
բան ե։ Իզուր տեղը լաց մի լինի։ Կաբլունու-  
նիում շատ լավ կլինի քեզ համար։

— Զե, չե, չեմ ուզում...  
Յես ընկա մտածմունքի մեջ։ Թե յես և թե  
ընկերներս շատ եյինք ափոսում, վոր պիտի բա-  
ժանվենք Մաննիից, բայց տանել նրան մեզ հետ  
հակառակ նրա կամքի՝ վոչ մի ցանկություն չու-  
նեյինք։

— Ի՞նչ արած, Մաննի, յեթե մեզ հետ չես  
ուզում գալ, մենք կթողնենք քեզ այստեղ, եսկի-  
մուների մոտ։

Մաննին լացը կտրեց։  
— Ախ, կաբլունա, ուրեմն դու կթողնե՞ս, վոր  
Մաննին մնա։ Այո, Մաննին շատ ե ուզում այս-  
տեղ մնա։

Ճար չկար, պետք եր համաձայնել։  
Այստեղի եսկիմոսների մեջ մի բարեկամ ու-

\* Բուրերը հումանուացի գաղթականներ են Հարավային Աֆ-  
րիկայում։


Նեյի Մանիտիսիա անունով, վոր մի շատ քարի և  
լավ մարդ եր: Հետեյալ որը յես գնացի նրա մոտ  
և առաջարկեցի, վոր Մաննիին թողնեմ իր մոտ:

Մանիտիսիան ուրախացավ, վորովհետև նա զա-  
վակ չուներ, իսկ Մաննին լավ վորսորդ եր:

Յերկու որ անցած Մաննին մեզանից ստա-  
ցած ընծաները՝ հագուստ, ծխախոտ, սապոն, յեր-  
կու հրացան ու պատրոններ հետն առած հեռա-  
ցավ մեր նավից:

Նա ամենեին տիսուր չեր: Ընդհակառակը՝ ու-  
րախությունից թոշկոտում ու պարում եր: Նո-  
րից կակսի նրա նախկին կյանքը՝ փոկ վորսալը,  
կալառուդի, նրա սրտին մոտ սովորությունները...

Իսկ մի քանի շաբաթից հետո մենք ել հե-  
ռացանք այստեղից և ուղևորվեցինք հեռու, դեպի  
արևմուտք:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|       |                                           |    |
|-------|-------------------------------------------|----|
| I.    | Մենք յեղերում ենք . . . . .               | 5  |
| II.   | Ծանոթանում ենք եսկիմոսների հետ . . . . .  | 8  |
| III.  | Հյուր ենք գնում եսկիմոսների մոտ . . . . . | 15 |
| IV.   | Մենք մոտ ծանոթներ ենք դառնում . . . . .   | 20 |
| V.    | «Մեծ վորսը» . . . . .                     | 29 |
| VI.   | Մաննին արջ և սպանում . . . . .            | 43 |
| VII.  | Վորսի յենք գնում կայակով . . . . .        | 49 |
| VIII. | Ամառը եսկիմոսների բնակատեղիում . . . . .  | 63 |
| IX.   | Մաննին կարլունա յե դառնում . . . . .      | 73 |

ՀՀ Ազգային գրադարան



NL0145028

15917

ԳԻՒԾ 45 ԿՈՊ.

АМУНДСЕН  
ЭСКИМОСИК МАННІ



ԱՐՄԵՆԳԻԶ ԷՐԻՎԱՆԻ